

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՍԱԴՐԱՄ

Ե. Ա. Յարուբյունյան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐԸ ԱՆՑՈՒՄՎՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

§1. Էլիտար ժողովրդավարություն Եւ սոցիոմշակութային պարտադրանքների շարժառիթները

Քաղաքական համակարգը ֆունկցիոնալ կախվածության սկզբունքով ձևավորված հասարակության քաղաքական կազմակերպման ինստիտուցիոնալ եղանակ է, որի հիմնական խնդիրներից մեկը կայունության ու կարգավորվածության քաղաքական ամենօրյա արտադրության կազմակերպումն է:

Կայունության ու կարգավորվածության ամենօրյա «քաղաքական արտադրության» կազմակերպման կարևոր պայմաններից մեկը ազգի հոգևոր-արժեքային միասնությունն է: Ինչպես ցույց է տալիս անցումային Հայաստանի փորձը, առօրյա կյանքում և ներքաղաքական հարաբերություններում անկայունության ու կոնֆլիկտների պատճառներից մեկը սոցիալական համակարգի արժեքային-հոգևոր ճգնաժամն է: Վերջին մի քանի տարիների ընթացքում էապես փոխվել է հասարակական-քաղաքական հարաբերությունների ու կառուցվածքի իմաստային նշանակությունը, էական տեղաշարժեր են կատարվել մարդկանց արժեքային կողմնորոշումների բնագավառում: Այդ ամենի հետևանքով այն, ինչ նախկինում կարևոր և իմաստային էր, կորցրել է իր գործառական նշանակությունը: ճգնաժամն արտահայտվում է նաև նրանում, որ սոցիալական կյանքն ընթանում է անորոշության ռեժիմի պայմաններում և հասարակական ու քաղաքական համակարգերը մարդկանց չեն առաջարկում սոցիալիզացիայի հստակ ուղիներ ու միջոցներ: Շրջանառության մեջ են դրվել նոր սոցիոմշակութային արժեքներ, որոնց հոգեբանորեն, բարոյապես ու քաղաքականապես մարդիկ դեռևս լիովին պատրաստ չեն:

Անցումային հասարակություններին բնորոշ հոգևոր ճգնաժամի էական բնութագրերից մեկն այն է, որ անցյալի, որպես սոցիալական վարքի կարևորագույն դետերմինանտի, նկատմամբ ձևավորվում է ռևանշի զգացողություն և այդ հիմքի վրա մշակվում է անցյալը հիմնովին մերժող ու արժեզրկող մեղադրական հատուկ գաղափարախոսություն: Ի հավելում այդ ամենի, շրջանառության մեջ են դրվում սոցիոմշակութային նոր արժեքներ, որոնց օգնությամբ սոցիալ-քաղաքական ընտրանին փորձում է

նվաճել քաղաքական դաշտը: Այս առնչությամբ քաղաքական համակարգի առջև ծառանում են լրացուցիչ խնդիրներ՝ կապված իր սոցիոնշակութային լեզիտիմության պրոբլեմի հետ: Բանն այն է, որ, ստանձնելով հոգևոր իշխանության գործառույթ, քաղաքական համակարգը, դրանով իսկ, իր վրա է վերցնում երկու փոխպայմանավորված պարտավորություններ:

առաջին՝ ազգային կյանքի քաղաքական կազմակերպման ընթացքում հաշվի առնել ազգային կեցության և ինքնության սոցիոնշակութային արժեքները, ինչպես նաև ներազգային կյանքի ոչ քաղաքական կանոնակարգման պատմական փորձը,

Երկրորդ՝ արդի քաղաքակրթության ռացիոնալ պահանջները (ժողովրդավարություն, ազատականություն, մարդու իրավունքներ և այլն) ազգային կեցության առանձնահատկությունների հետ համատեղելու միջոցով նպաստել «արդիականացված» ազգային կերպարի ձևավորմանը:

Քննարկվող հարցի տեսանկյունից հետամբողջատիրական երկրների քաղաքական համակարգերը լուրջ բացթողուններ ունեն և պատասխանատու են ոչ միայն իրենց երկրների սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի կայունության ու անվտանգության, այլև սոցիոնշակութայինի համար: Անցումային հասարակություններում պետականության կայացման ու կերտման քաղաքական նախագծերը հիմնականում կառուցված են քաղաքակրթության արտաքին փորձի և դրա մեխանիկական ընդորինակնան սկզբունքով՝ հաշվի չառնելով ներազգային կյանքի կազմակերպման ու կանոնակարգման փորձն ու ավանդույթները:

Համաշխարհային քաղաքակրթության գարգացման արդի միտունների շրջանակներում սոցիոնշակութային գործոնը նոր հնչեղություն է ձեռք բերել: Բանն այն է, որ հետխորհրդային հասարակություններում ձևավորված քաղաքական համակարգերը արևմտյան հասարակության նմանօրինակը ստեղծելու նպատակով, որպես կանոն, հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են ժողովրդավարության գաղափարախոսության ու ժողովրդավարության ատրիբուտներին համապատասխան հաստատությունների (շուկայական կառույցներ, կուսակցական համակարգ, սահմանադրություն, դատարան և այլն) ստեղծման վրա: Տեղին է նկատել նաև, որ անցումային փուլերում այդ ինստիտուտների ձևավորումը հաճախ ընթանում է ոչ թե սոցիալական արտադրության ու օրինականության շրջա-

նակներում, այլ ազատականության թյուր ըմբռնման՝ թողտվության, անօրինականության, քաղաքական պատասխանատվության բացակայության և այլն: Ինքնին հասկանալի է, որ համակարգային փոխակերպումների հատկապես առաջին փուլում ժողովրդավարության ատրիբուտներին բնորոշ ինստիտուտները խիստ կարևոր դեր են կատարում նախորդ համակարգի գաղափարական ու իրավաքաղաքական հիմքերը խարիսկելու և վերացնելու գործում: Ի դեպ, այս հարցերում այսօր Հայաստանի և հետխորհրդային մյուս երկրների քաղաքական համակարգերը առանձնապես լուրջ խնդիրներ չունեն: Հազիվ թե քաղաքական հավակնություններ ունեցող որևէ կուսակցություն գտնվի, որ մերժի շուկայական հարաբերությունների կամ բազմակուսակցական համակարգի ինստիտուտը: Եղած վեճերն ու տարածայնությունները սկզբունքային չեն և ընդամենը առնչվում են կառավարման նախագահական կամ պառլամենտական համակարգերի առավելությունների և պետության սոցիալական ֆունկցիաների հարցերին: Բայց կարծել, թե ժողովրդավարության ու շուկայական հարաբերությունների օրենսդրական փաստումը արդեն ամեն ինչ որոշում և լուծում է, միամստություն է:

Վերակառուցվող հասարակությունների փորձը ցույց է տալիս, որ ոչ ժողովրդավարության գաղափարը, ոչ էլ ժողովրդավարության ինստիտուտներն ինքնին, առանց համապատասխան երնունշակութային միջավայրի ոչ միայն ցանկալի արդյունք չեն տալիս, այլև հարուցում են նոր պրոբլեմներ ու դժվարություններ և, որպես կանոն, արժեզրկվում: Այդ տեսակետից անցումային հասարակությունների քաղաքական համակարգերը և նրանց միջուկը կազմող իշխանությունները իրենց իսկ կայացման և ազգային ու պետական անվտանգության հիմնախնդիրները արդյունավետ լուծելու համար կանգնած են իրենց գործունեության ուղղվածության, ծրագրերի ու խնդիրների բովանդակության վերանայման պրոբլեմի առջև: Դարկ է նկատել, որ մեզանում ևս ժողովրդավարությունը մինչև վերջերս ընկալվել է որպես արժեք և գրեթե նույնացվել ազատականության և գիտատեխնիկական քաղաքակրթության հետ: Պատահական չեն, որ հետխորհրդային հասարակությունների քաղաքական համակարգերը, որպես կանոն, լուսանցքային չղաղնալու և արևմտյան արդիականության տեսանկյունից իրենց գոյության լեզիտիմությունը փաստելու նտահոգությամբ՝ միշտ հավաստում են ժողովրդավարական արժեքներին իրենց

հավատարմությունը: Բայց ժողովրդավարությունը ոչ միայն վերացական արժեք է, այլև սոցիալական իրականություն, ինչը անցումային հասարակություններում հաճախ դրսություն է աղքատության, գործազրկության, իրավագրկության, անօրինականության և նմանատիպ այլ բացասական երևույթների տեսքով: Անշուշտ, կարելի է բազմաթիվ առարկայական ու ենթակայական պատճառներ բերել և ապացուցել, որ դրանք անցումային շրջանին բնորոշ ժամանակավոր երևույթներ են և կապ չունեն ժողովրդավարության հետ: Բայց դա կլինի արդարացում և ոչ թե բացատրություն: Այդ իսկ պատճառով էլ տրամարանական հարց է առաջանում. ինչու՞ հետխորհրդային ու հետհամայնավարական որոշ երկրներում (Եხաստան, Շունգարիա, Մերձբալբյան երկրներ) սոցիալ-քաղաքական ու տնտեսական ճգնաժամները ավելի արագ հաղթահարվեցին, քան մյուսներում: Ինչու՞ Զինաստանում առանց քաղաքական հանակարգի փոփոխության ազատականության սկզբունքները ավելի արդյունավետ գործեցին, քան ազատական ժողովրդավարությունը անվերապահորեն ընդունած հետխորհրդային երկրներում: Անկախ արտաքին ու աշխարհաքաղաքական ինչ-ինչ հանգամանքներից, պատճառները երկուսն են.

Առաջին՝ արևելաբնորպական վերոհիշյալ անցումային հասարակությունները, ունենալով համապատասխան փորձ և ավանդույթներ, արագորեն ձևավորեցին ժողովրդավարական քաղաքական հարաբերությունների հիմքերը՝ սոցիալական կառույցներ (իրենց շահերը գիտակցող սոցիալական խավեր և համապատասխան հասարակական կազմակերպություններ), դրանով իսկ նպաստելով քաղաքացիական հասարակության սոցիոնշակութային իննունքների ձևավորմանը:

Երկրորդ՝ մասնավորապես Զինաստանի փորձը ցույց տվեց, որ ներագային կյանքի կազմակերպման ժամանակ ցանկացած տիպի քաղաքական հանակարգ շուկայական հարաբերությունները կարող է դարձնել տնտեսավարման արդյունավետ եղանակ, եթե հենվում է ուժեղ իշխանության, ազգային ավանդույթների, սոցիալական կառույցների փոխշահավետ համաձայնության ու ազգային ինքնությանը բնորոշ բարոյական կողեքսի վրա:

Ասվածից հետևում է, որ ժողովրդավարությունը վերացական արժեքից գործող և իր առավելությունները հաստատող արժեք է դառնում միայն այն ժամանակ, երբ տնտեսության ազատականությունը հավասարակշր-

վում է սոցիոնշակութային կամ էթնոնշակութային վերքաղաքական կարգավորիչներով: Փորձենք ինց այդ տեսանկյունից դիտարկել քաղաքական և հոգևոր իշխանությունների տարանջատման սկզբունքի իրական վիճակը փոխակերպվող հասարակությունների քաղաքական համակարգերի գործունեության համատեքստում:

Իշխանության տարբեր թևերի տարանջատումը և նրանցից յուրաքանչյուրի անելիքների և խնդիրների հստակեցումը քաղաքական ողջ համակարգի ռացիոնալացման, հակաշիռների ինստիտուտի ստեղծման և հավասարակշռության հաստատման կարևորագույն պայմաններից մեկն է: Բայց քաղաքացիական հասարակություններին բնորոշ համընդհանուր այդ սկզբունքը անցումային հասարակություններում լիովին չի գործում: Ազգային կյանքի քաղաքական կազմակերպման սկզբնական շրջանում ազգային ու պետական համակարգերի գաղափարական ու արժեքային կողմնորոշումների հիմնահարցերը մղվում են առաջին պլան, և քաղաքական համակարգը, որպես ազգային շահերի անվտանգության սուբյեկտ, հաճախ նաև հարկադրված, նաև ակցում և միջամտում է հասարակության սոցիոնշակութային նոր կողմնորոշումների ձևավորման գործընթացներին՝ ժամանակավորապես կատարելով նաև հոգևոր իշխանության գործառույթ:

Դասական իմաստով քաղաքական համակարգը պարտավոր է սահմանափակել հասարակական կյանքի վրա անհարկի միջամտությունները, քանի որ մարդիկ իրենց կողմնորոշումների ու պահանջմունքների մեջ մասը կարող են բավարարել ինքնագործունեության միջոցով՝ օգտվելով քաղաքացիական հասարակության և շուկայական հարաբերությունների ընձեռած հնարավորություններից: Մինչեւ անցումային հասարակությունների քաղաքական համակարգերը, որպես կանոն, դեկավարվում են էլիտարիզմին բնորոշ «սոցիոնշակութային պարտադրանքների» սկզբունքով, գտնելով, որ արդի քաղաքակրթության զարգացման բարդ ու հակասական գործընթացներում հասարակության «պահպանողական մեծամասնությունը» չի կարող ճիշտ կողմնորոշվել և ճիշտ որոշումներ կայացնել: Այդ տեսակետից հետխորհրդային գրեթե բոլոր քաղաքական համակարգերը և հատկապես նրա միջուկը կազմող քաղաքական իշխանությունները իրենց գործունեության հատկապես առաջին փուլում դեկավարվում են «համոզնունքի եթիկայի» սկզբունքով և ակամա վերածում

արևմտյան լիբերալիզմի սոցիոնշակութային ու քաղաքական իմպերատիվների տարածման ու ներդրման գաղափարայնացված ինստիտուտի:

Պետականության կայացման և ազգային անվտանգության տեսանկյունից անցումային հասարակության քաղաքական համակարգի առջև ծառացած հրատապ խնդիրներից մեկը քաղաքական ու սոցիոնշակութային բարեփոխումների «անհրաժեշտության» և «նպատակահարմարության» սահմանների ճշգրտումն է:

Վերափոխումների առաջին փուլում հիմնարար բարեփոխումներն որպես կանոն ընթանում են «անհրաժեշտության» տրամաբանությամբ: Բարեփոխումները իրագործող քաղաքական ընտրանին իր գործողությունների արմատականությունը պատճառաբարանում է «անհրաժեշտության» հետևյալ հիմնավորումներով: Առաջին՝ ժողովրդավարության սկզբունքների ներդրումը կնպաստի խորհրդային համակարգից արագ ձերբագատվելուն և բարեփոխումները կդառնան անշրջելի, երկրորդ՝ կապահովվի արևմտութիւն քաղաքական և ֆինանսական աջակցությունը, երրորդ՝ բարեփոխումները քաղաքական ընտրանու համոզնունքների արդյունքն են: Այլ կերպ ասած՝ քաղաքական ու սոցիոնշակութային փոփոխությունները բխում են քաղաքական համակարգի «համոզնունքների եթիկայի» կողեքսից: Բայց չնորանանք, որ «համոզնունքի եթիկայի» սկզբունքներով էին գործում նաև բոլշևիկները՝ դեկավովելով նաև կոմունիզմի առասպեկտի գաղափարական մի ամբողջական ծեռնարկից:

Արմատական բարեփոխումների վերոհիշյալ հիմնավորումները թեև տրամաբանական են, բայց վերաբերում են ոչ թե ժողովրդավարությամբ, այլ՝ ազատականությամբ: Զինաստանի փորձը ցոյց է տալիս, որ ազատականություն ու դրամատիրական հարաբերություններ կարելի է հաստատել նաև առանց ժողովրդավարության և քաղաքահական հասարակության: Ավելին, Զինաստանի մենատիրական քաղաքական համակարգը յուրահատուկ գարանտ ու զսպաշապիկ է, որպեսզի ազատականությունը չվերածի անօրինականության և սոցիալական ոչ լեգիտիմ շերտավորման: Այնպես որ ազատականությունը ինքնին ոչ թե ժողովրդավարություն է, այլ ժողովրդավարության հաստատման նախապայման: Ազատականությունը ինքնին համակարգաստեղծ ժողովրդավարական արժեք չէ: Այն այդպիսին կարող է դառնալ կամ քաղաքացիական հասարակություն ստեղծելու դեպքում, երբ սոցիալական տարաբնույթ կառույցներն ու

կազմակերպությունները, որոնք նաև քաղաքական պատվերով չեն ստեղծվել և չեն գտնվում քաղաքական ուժերի հսկողության տակ, օրենքի իշխանության պաշտպանվածությամբ կարող են հակազդել ազատականության «վայրի» դրսերումներին, կամ էլ այն դեպքում, երբ ազատականությունն ու շուկայական տնտեսությունը վերահսկվում են որոշակի գաղափարական ուղղվածություն ունեցող ուժեղ քաղաքական իշխանության կողմից: Նկատենք, որ համակարգային բարեփոխումների առաջին փուլում վերոնշյալ նախապայմանները նոր-նոր միայն ձևավորվում են և քաղաքացիական հասարակությանը բնորոշ պաշտպանական մեխանիզմներ չունեցող ժողովրդի մեծամասնությունը, զգալով ժողովրդավարական նորմերի իրական առավելությունները, ակամա դաշնում է բարեփոխումների և դրանք իրագործող քաղաքական ուժեղինություն: Դաշվի առնելով այդ հանգամանքը, կարելի է ասել, որ բարեփոխումների այս փուլում քաղաքական համակարգերը կանգնած են իրենց նախորդ գործունեությունից ածանցյալ երկրնտրանքի առջև: Առաջին՝ եթե քաղաքական համակարգը շարունակելու է գործել «ազատականություն առանց ժողովրդավարության» կարգախոսով, ապա ազգային-հանրային քիչ թե շատ տանելի կյանք և հարաբերություններ ապահովելու միակ ելքը ուժեղ քաղաքական իշխանության ստեղծումն է: Զասարակարգի ժողովրդավարական լինելը որոշվում է ոչ միայն հրաշակված սկզբունքներով, այլև կոնկրետ մեթոդներով: Իսկ այդ մեթոդները վերոհիշյալ կարգախոսի պայմաններում կարող են և չհամապատասխանել ժողովրդավարության սկզբունքներին, պայմանով, որ քաղաքական համակարգի նպատակը ներազգային համակեցության քիչ թե շատ տանելի և ընդունելի սոցիալական պայմանների ստեղծումն է: Զակառակ դեպքում ազատականությունը և դրամատիրական հարաբերությունների ներկա վիճակը ձեռնտու է միայն քաղաքական և սոցիալական ընտրանում: Երկրորդ՝ եթե քաղաքական համակարգի հոգևոր իշխանության վերջնական նպատակը ժողովրդավարության սոցիոնշակութային արժեքների գործարկումն է, ապա սոցիալական արդարության մասին ընդհանուր հայտարարություններից պետք է անցնի ժողովրդավարության հաստատման կարևորագույն պայմաններից մեկի՝ քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման աշխատատար և ոչ անմիջական քաղաքական շահ ենթադրող քաղաքական գործունեությամբ: Ասել, թե անցումային հա-

սարակություններում քաղաքացիական հասարակության ինստիտուտները ընդհանրապես չեն գործում սխալ կլինի: Պարզապես արմատական ազատականության պայմաններում դրանք լուրջ դերակատարություն չունեն և դրանցով ավելի շատ զբաղվում են արևմտյան համանման կազմակերպությունները, քան քաղաքական համակարգը:

Բայց արդյո՞ք քաղաքացիական հասարակության ինստիտուտցինալ կառույցների ձևավորման հարցը նտնում է քաղաքական համակարգի ֆունկցիաների մեջ և ի՞նչ առնչություն ունի հոգևոր իշխանության հետ:

Քաղաքացիական հասարակությունը ինքնարերաբար ստեղծված սոցիալական կառույցներ են, որոնք անջատ են քաղաքական իշխանությունից: Բայց դրանք հանդիսանում են ժողովրդավարության սկզբունքներով ձևավորված քաղաքական համակարգի և նրա առանձին ինստիտուտների հիմքը: Իսկ դա նշանակում է, որ քաղաքական համակարգը, եթե իհարկե նրա նպատակը երկրում ժողովրդավարություն հաստատելն է, չի կարող չնաև նպատակ իր հիմքերի ձևավորմանը: Բացի այդ, ինքնակառավարման այդ կառույցները կայունության ու կարգավորվածության արտադրության կարևոր օլյակներ են: Ի վերջո, դրանք չափից ավելի քաղաքականացված հասարակության քաղաքացիացման միակ և հուսալի մեխանիզմներ են: Մի կարևոր հանգամանք ևս: Քաղաքացիականության հիմքը ոչ թե քաղաքականությունն է, այլ՝ հոգևոր ու սոցիոնշակութայինը և, հետևաբար, հոգևոր իշխանության ֆունկցիաներ ստանձնած քաղաքական համակարգը պարզապես պարտավոր է իր ուշադրության կենտրոնում պահել այդ պրոբլեմը:

Արդյունավետ սոցիալ-քաղաքական համակարգ ստեղծելու և ներաբետական ու ներազգային կայունություն ու կարգավորվածություն հաստատելու վերոհիշյալ երկու հնարավոր տարրերակներից որն էլ ընտրվի որպես ազատականության չափավորման միջոց կամ եղանակ, դրական արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, եթե այդ քայլերը համապատասխանում են տվյալ էթնոկեցության սոցիոնշակութային առանձնահատկություններին: Նման դեպքերում ազգային կյանքի կանոնակարգման քաղաքական համակարգի ձեռնարկությունները արժանանում են «էթնոնշակութային աջակցության»:

Հասարակության և քաղաքական իշխանության փոխօտարվածության մասին խոսելիս որոշ վերլուծաբաններ առանձնացնում են հասարակու-

թյան ապաքաղաքականացվածության փաստը: Իրականությունն այն է, որ անցումային փուլերում մարդիկ այնքան էլ չեն հավատում քաղաքական իշխանություններին: Բայց չհավատալը և ապաքաղաքականացված լինելը տարբեր բաներ են: Յենց այն փաստը, որ ազատականության պայմաններում «խորհրդային մարդը» քաղաքական համակարգից բարեկեցություն և երջանկություն է ակնկալում, նշանակում է նա քաղաքական ապրելակերպ է ուզում: Ապրելակերպ, ուր մարդու ազատությունն ընկալվում է որպես քաղաքական համակարգին ենթարկվելու «սրբազն իրավունք»: Խորհրդային տարիներին ձևավորված «պետական քաղաքացին» այսօր գրկվել է այդ իրավունքից և արհամարհված է զգում: Նախորդ քաղաքականացված ապրելակերպի համակարգում քաղաքացին ինստիտուցիոնալ զանազան ենթահամակարգերի միջոցով պետության հասարակական ու քաղաքական կյանքին մասնակցելու պերմանենտ «հրավեր» էր ստանում: Ստեղծվել էր այսպես կոչված մասնակցության ժողովրդավարության թվայցալ համակարգ, ուր «Ենթարկվելու իրավունքը» փոխհատուցվում էր «մասնակցելու իրավունքով»: Բացի այդ, խորհրդային համակարգը ստեղծել էր արդարության սոցիալական ուստոպիա: Այդ ուստոպիան մարդկանց պահպանողական մեծանասնության համար «լեգիտիմ» նշանակություն ուներ, քանի որ առնվազն հոգերանորեն բավարարված էր, որ նախաձեռնության, ծեռներեցության և ինքնահաստատման այլ մղումները արգելող քաղաքական համակարգը հաստատել էր «պարտադրված հավասարության ապրելակերպ»:

Պարտադրված այդ ապրելակերպին մարդկանց մի զգալի մասը ենթարկվում էր, և այն համարում մարդկանց սոցիալական վարքը կանխատեսելի և հուսալի դարձնող սոցիոնշակութային ընդունելի համակարգ: Փաստորեն ստեղծվել էր ազատականությունը մերժող ուժի իշխանություն, որը «պարտադրված հավասարության» սկզբունքի հիման վրա կազմակերպել էր տրամադրությունը սոցիոնշակութային յուրահատուկ արտադրություն, որի շրջանակներում ձևավորվում էր այդ համակարգին համակերպված, ազատություն և նրգակցություն չընդունող և չափավոր պահանջներ ունեցող խորհրդային քաղաքացին :

Ինչպես արդեն նշեցինք, հետխորհրդային հասարակությունների քաղաքական համակարգերը առարկայական ու ենթակայական մի շարք պատճառներով չեն կարող լիովին գործադրել քաղաքական և հոգևոր

իշխանությունների տարանջատման սկզբունքը և դեկավարվելով էլիտա-րիզմին բնորոշ սեփական ուղու և պատկերացումների ճշնարտության համոզմունքով, հասարակությանը պարտադրում են որոշակի սոցիոնշակութային արժեքներ:

Ժողովրդավարության սոցիոնշակութային հիմունքներից մեկը անհատի առաջնայնության կամխավարկածն է: Խորհրդային «կոլեկտիվ հավասարության պարտադրանքներին» փոխարինած այս սկզբունքը ինքնին առաջադիմական է, եթե, իհարկե, չդառնա ներազգային կյանքի կարգավորման գերակայական նորմ և կիրառվի միայն իրեն սահմանված շրջանակներում: Ամբողջ հարցն այն է, որ այդ սկզբունքը շրջանառության մեջ է դրվել դրամատիրական հարաբերությունների ձևավորման նախնական փուլում, երբ նոր կազմավորվող ծեռներեց խավը շուկայական հարաբերություններ էր ձևավորում, ուր գործընկերները իրոք պետք է ներկայանային որպես հավասարներ և ոչ թե անձնական կախվածության մեջ գտնվող սուբյեկտներ: Այսինքն՝ անհատի առաջնայնության սկզբունքը ազատականության և շուկայական հարաբերությունների նորմ է և ոչ ավելին: Երբ շուկային բնորոշ և լիովին արդարացված սկզբունքը, որպես սոցիոնշակութային համընդհանուր արժեք, պարտադրվում է նաև կյանքի այլ ոլորտներին, դառնում է հասարակական հարաբերություններն ու կապերը կազմալուծող գործոն:

Հետխորհրդային հասարակությունների քաղաքական կյանքում այս սկզբունքը նախապես ուղղված էր կենտրոնացված-բռնապետական կարգերի դեմ: Անհատի առաջնայնության սկզբունքը քաղաքական գործող արժեք էր հատկապես այն ժամանակ, երբ որպես «զենք» կիրառվում էր խորհրդային կարգերի դեմ, որը երկրի ու ժողովրդի անունից ոտնահարում էր մարդկանց իրավունքները: Պատմական մեկ այլ պայմաններում և այլ խնդիրներ լուծող վերոհիշյալ սկզբունքը, որը անցումային շրջանի քաղաքական ընտրանին դարձրել է հոգեր առաջադիմության այլընտրանք չունեցող համոզմունք, հակակշիռների բացակայության պատճառով դրսնորվում է անպատասխանատու քաղաքական իշխանության, սոցիալապես անպաշտպան խավերի, սոցիալ-դարվինիզմի, սոցիալական ու քաղաքական կոնֆլիկտների տեսքով: Եվ այս ամենի հիմնական պատճառը դրսնորվում է անպատասխանատու քաղաքական իշխանության, սոցիալապես անպաշտպան խավերի, սոցիալ-դարվինիզմի, սոցիալական ու քաղաքական կոնֆլիկտների տեսքով: Եվ այս ամենի հիմնական պատճառը այն է, որ բարեփոխումներ իրագործող քաղաքական համակարգերը, ընդունելով շուկայական հարաբերություններին և քաղաքական

ազատ ընտրությանը բնորոշ անհատի առաջնայնության սկզբունքը, նույնքան ակտիվորեն չնպաստեցին այդ սկզբունքին հակազդող մեխանիզմների (ժողովրդավարություն և քաղաքացիական հասարակություն) ձևավորմանը: Այդ տեսակետից հետխորհրդային երկրների քաղաքական համակարգերը առավելապես ազատական են, քան ժողովրդավարական: Ավելացնենք նաև, որ հակազդող մեխանիզմների արդյունավետ գործունեության պայմաններում անգամ արևմտյան հասարակությունները այսօր կանգնած են ներհասարակական կյանքը սոցիոնշակութային համախմբման պրոբլեմի առջև: Դասարակականի առաջնայնության արևելյան եւ անհատի առաջնայնության արևմտյան ծայրահետ դրսնորումները ներպետական կյանքի կազմակերպման և կարգավորվածության ամենօրյա արտադրության արդյունավետ եղանակներ չեն, եթե չունեն սոցիալական համակեցության արժեքային ու քարոյահոգեբանական կայուն համակարգեր: Առանց բոլորի կողմից գիտակցված ու ընդունված ավանդական ժիսական վարքի, միայն արտաքին միջոցներով (ուժեղ քաղաքական իշխանություն) կամ ինքնազործունեությամբ (քաղաքացիական հասարակության հաստատություններ) հնարավոր չէ պահովել համակարգի կայունությունն ու մարդկային փոխհարաբերությունների կարգավորվածությունը: Այնտեղ, ուր կայունության սոցիոնշակութային դաշտը (ընտանիք, ավանդույթներ, եկեղեցի և այլն) լիովին չի մասնակցում համակեցության պահպանմանը, միայն քաղաքական լծակներով հնարավոր չէ հաստատել կայունություն և օրգանական համերաշխություն: Անցումային հասարակություններին բնորոշ այն համատարած մտայնությունը, թե խորհրդային համակարգի փուլումից հետո մարդկանց կյանքում քաղաքականությունը կմղվի երկրորդ պլան, և ազատական նոր համակարգում մարդիկ իրենց սոցիալական էներգիան կուղղորդեն ինքնախրացման սոցիալ-տնտեսական ոլորտ, չարդարացավ: Հետամբողջատիրական հասարակությունների փորձը ցույց է տալիս, որ այսօր էլ քաղաքական համակարգերը չեն ձերբազավել այդ մտայնությունից և կարծում են, թե ազատականություն ինքնին անհրաժեշտ ու բավարար պայման է մարդկանց պահանջմունքները ապաքաղաքական ճանապարհով բավարարելու համար: Իրականում շուկան և անհատի ազատ գործելու իրավունքը կարող են նպաստել պահանջմունքների բավարարման ապաքաղաքականացված գործունեությանը, եթե

• ազգային հարստության սեփականաշնորհումն ու ապապետականացումը ավարտվել է,

• ավարտվել է հասարակության շերտավորման դժվարին գործընթացը, և մարդիկ հոգեբանորեն ընդունել ու համակերպվել են իրենց սոցիալական տեղին ու դերին,

• ձևավորվել և ինքնավար գործառնում է տվյալ համակարգի սոցիոմշակութային դաշտը, որը նաև ակտիվորեն մասնակցում է հասարակական պահանջնունքների ձևավորմանն ու դրանց ռացիոնալացմանը,

• սոցիոնշակութային արժեքները համապատասխանում են ազգի ինքնությանը և քաղաքական պարտադրանքներ չեն:

Դժվար չէ նկատել, որ վերոհիշյալ պայմաններից և ոչ մեկը փոխակերպվող հասարակություններում լիովին չեն ձևավորվել: Իսկ դա նշանակում է, որ հոգևոր իշխանության գործառույթ ստանձնած անցունային հասարակությունների քաղաքական համակարգերը հաճախ դեկավարվում են մշակութային ու քաղաքակրթական այնպիսի կողմնորոշուններով և դնում վերափոխման այնպիսի խնդիրներ, որոնց լուծման ոչ էթնոնշակութային անհրաժեշտ նախադրյալները կան, ոչ էլ՝ սոցիալ-տնտեսական ու տեխնոլոգիական: Այդքանով էլ քաղաքական այդ համակարգերը երբեմն դրսելու են տոտալիտարիզմին բնորոշ վարք և ազգային կյանքի սոցիալ-տնտեսական կազմակերպման իիմնական գործառույթի փոխարեն կատարում ազատականության գաղափարների ու նախագծերի ներդրման-պարտադրման գործառույթ՝ մշտապես հանդիպելով ներքեւ եկող տարերային դիմադրության կամ, լավագույն դեպքում, անտարբերության: Պատահական չէ նաև, որ քաղաքակրթական ներմուծման առաքելություն կատարող ննանատիպ քաղաքական համակարգերում իշխանության համակարգը նախորդում է ընտրազանգվածի կամքին: Անցունային հասարակություններում անցկացված ընտրությունները հաճախ հաստատում են, որ ընտրազանգվածի կամքը ի վերջո ածանցյալ է ընտրական տեխնոլոգիաներից: Ավելացնենք, սակայն, որ այս երևույթը բնորոշ է արդի գրեթե բոլոր քաղաքական համակարգերին:

Դեկավարվելով «համոզնունքի էթիկայի» սկզբունքով, ըստ որի ազգի պահպանողական մեծամասնությունը դեռևս պատրաստ չէ իր ճակատագիրը տնօրինելու մենաշնորհին, էլիտար ժողովրդավարության սկզբունքով դեկավարվող քաղաքական ընտրանին հայտնվել է պարադրսալ

իրավիճակում: Մի կողմից, անցունային հասարակություններում քաղաքական համակարգը չի կարող չմիջամտել հասարակական կյանքին, քանի որ դեռևս չձևավորված և անհրաժեշտ փորձ չունեցող քաղաքացիական հասարակությունը պատրաստ չէ ինքնագործունեությամբ բավարրել իր պահանջնունքները: Մյուս կողմից՝ քանի դեռ չի ձևավորվել «քաղաքական ազգը», չեն հստակեցվել ազգային շահերն ու անվտանգության հիմնախնդիրները, ի՞նչ երաշխիք, թե նույն միջավայրից ծնված քաղաքական ընտրանին ավելի ճիշտ է ընթանում հասարակության զարգացման օրինաչափությունները: Նման մտահղության լուրջ հիմքեր կան, քանի որ էթնոկեցությունից չըխող, բայց կենսակերպ դաշնալու հավակնություններ ցուցաբերող արմատական ազատականության բարքերը ինչ-որ իմաստով քաղաքական բռնության դրսելուններ են համակեցության ազգային սովորույթների ու հոգեբանության վրա: Քաղաքական-քաղաքակրթական այդ բռնության հետևանքով սոցիալական-ազգային պետություն կառուցելու ծրագրերը շատ հաճախ վերածում են ազատական հասարակություն կառուցելու ծրագրերի: Արդյունքում, որպես կանոն, ներքին քաղաքականության մեջ վճռորոշ դեր են կատարում քաղաքակրթական արտաքին սոցիոնշակութային արժեքները: Տեղի է ունենում «Աներքին գաղութացում» և հասարակությանը պարտադրվում են մարդկային հարաբերությունների կարգավորման նոր չափանիշներ ու արժեքներ: Ազատականության ծայրահետ դրսելունների արդյունքները ցույց են տալիս, որ հոգևոր իշխանության հավակնություններ դրսելող քաղաքական համակարգերը իրենց կամքից անկախ ձևավորում են անկայունության մի նոր աղբյուր: «Ընդօրինակման էքսպանսիան», ձևավորում է ընդօրինակված արժեքային կողմնորոշուններ, պահանջնունքներ, ճաշակ ու բարքեր, որոնք չեն բխում տվյալ էթնոկեցության առանձնահատկություններից: Եթե այդ տեսանկյունից դիտարկենք անցունային հասարակությունների քաղաքական համակարգերի հոգևոր գործառույթները, կարելի է ասել, որ այդ համակարգերը ինչ-որ տեղ վերածել են «որոշուներ կայացնող» մի յուրահատուկ կենտրոնի, որի գործողությունները հաճախ չեն բխում սոցիալական համակարգի հնարավորություններից, շահերից, սոցիոնշակութային կողմնորոշուններից և այլն: Նման իրավիճակներում երկրի իրական պատմությունը և նրա ընթացքը քիչ չափով է պայմանակրոված հասարակության մեծամասնության ընտրությունից ու կամքից:

Փաստորեն էլիտար ժողովրդավարությամբ ղեկավարվող քաղաքական ընտրանին դարձել է նոր գաղափարներ ու ծրագրեր ներդնող, իսկ հասարակությունը՝ դրանք կատարող համակարգ: Ազգային կյանքի քաղաքական կազմակերպման նման եղանակը մեխանիկական-տեխնոլոգատական է և չի կարող նպաստել օրգանական կայունության ձևավորման ու ամրապնդմանը: Նման սկզբունքով ձևավորված պետությունն ու նրա քաղաքական համակարգը այնքան ժամանակ կարող են պահպանել իրենց քաղաքական կազմակերպման ձևը, քանի դեռ տիրապետում են ազգին «ֆիզիկական քննադատության» ենթարկելու լծակներին: Մինչեւ ազգային պետության գոյատևման անհրաժեշտ պայմանը ազգի ներքին-բովանդակային տիրապետումն է: Ազգը պետք է ոչ թե պարզապես ենթարկվի քաղաքական կազմակերպման այս կամ այն ձևին, այլ քաղաքական կազմակերպման այդ ձևը ճանաչի որպես իր հավաքական գոյության լավագույն եղանակ:

§ 2. Սոցիոմշակութային ճգնաժամի առօրյա դրսևորումները

Ազատականության և անհատի առաջնայնության սկզբունքները հայ ժողովրդի գոյատևման կենսափիլիսոփայությանը բնորոշ արժեքներ են: Թե սոցիոմշակութային առանձնահատկություններով և թե պատմական հանգանաքների բերումով ներազգային կյանքի կազմակերպման ու կարգավորման հարցում վերոհիշյալ արժեքները հայ ժողովրդի կյանքում առանձնահատուկ դեր են խաղացել: Այդ իսկ պատճառով էլ տրամաբանական հարց է ծագում. ինչու՞ ազգի քաղաքական կազմակերպման պարագայում մեր ինքնության հարազատ այդ արժեքները առավել քան բացասական հետևանքներ են թողնում:

Դայ ժողովրդի էթնոմշակութային առանձնահատկություններից մեկն այն է, որ ունի ներազգային կյանքի ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման «ազգային» այնպիսի ինստիտուտներ (ընտանիք, պատմական իշխողություն, ազգակցական կապեր, եկեղեցի, կորպորատիվ ավանդույթներ և այլն), որոնք պետության ու քաղաքական համակարգի բացակայության պարագայում անգամ պահպանել են պետականությունը (համակեցությունը): Մինչեւ ազատական պետության ձևավորումից ի վեր համակեցության բնագավառում գգալի դեֆորմացիաներ են կատարվել: Ինչոր իմաստով կարելի է փաստել, որ մեզանում պետության և պետականության զարգացման գործընթացները համարժեք չեն: Դարց է առաջանում, թե ինչու մեր ազգային ինքնությանը բնորոշ վերոհիշյալ արժեքները գործառնական տարբեր ու իրարամերժ հետևանքներ են թողնում: Ի՞նչն է փոխվել, և ինչու՞ անհատական հաջողության դիրքային պայքարի կենսափիլիսոփայությունը պետականորեն պաշտպանված ազատականության պայմաններում անհրաժեշտ արդյունք չի տալիս:

Պետականության բացակայության պարագաներում հայ ժողովրդի անհատական կենսագործունեության և համակեցության կարգավորման ու կազմակերպման գործում առանձնահատուկ դեր են խաղացել առօրյայում խորապես արմատավորված սոցիալական ու բարոյական ազգային արժեքները: Ինքնին հասկանալի է, որ ազգի քաղաքական կազմակերպման պայմաններում սոցիոմշակութային կարգավորման այդ գործառույթը մեծապես անցնում է շուկային և իրավունքին: Նկատենք, սակայն,

որ անցումային հասարակություններում անորոշությունը, տնտեսական կյանքի կազմալուծումը և նմանատիպ բազմաթիվ այլ երևոյթներ մարդկանց առօրյան ինքնին դարձնում են հակաժողովրդավարական, և շուրջան ու իրավունքը հազիվ թե կարողանան նպաստել արադարացի սոցիալական կարգի ծևավորմանը: Ավելին, նույնիսկ կայացած արևանտյան ժողովրդավարական երկրներում համակեցությունը ամբողջովին դրված չէ շուրջայական կարգավորման իրավասության տակ: Արևանտյան ժողովրդավարության հիմնական սկզբունքը քաղաքացիական հասարակության և պետության համարժեքությունն է: Քանի որ մեզանում քաղաքացիական հասարակության բնորոշ կառույցները դեռևս չեն ծևավորվել, և մեր ժողովրդավարությունը հաճախ նույնացվում է ազատականության սկզբունքներին, այդ պատճառով էլ վերոհիշյալ սկզբունքը մեզանում նշանակում է «շուրջայի և ազատական պետության համարժեքություն», ինչը լիովին հակասում է իրավական պետություններին բնորոշ քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման սկզբունքին: Պատահական չէ, որ «ինչը չի արգելվում՝ թույլատրելի է» հայտնի սկզբունքը սեփականաշնորհման հատկապես առաջին փուլում այլակերպվեց ամենաթողության: Ասվածից հետևում է, որ համապատասխան փորձի և սոցիոնշակութային ավանդույթների բացակայության պարագայում քաղաքակրթական ամենամեծ նվաճումներն անգամ կարող են դեմքորմացվել ու անցանկալի հետևանքներ ունենալ:

Վերջին հաշվով քաղաքակրթության նվաճումները գործառնական որևէ դեր կարող են կատարել, եթե բխում են տվյալ եթնոկեցության հիմունքներից և գործառնում տվյալ եթնոմշակույթի շրջանակներում: Սոցիալական կյանքի կարգավորումից պետության հրաժարումը տարբեր համակարգերում տարբեր հետևանքներ կարող է ունենալ: Ազգը որոշակի սոցիոնշակութային քաղաքակրթության ծնունդ է և յուրովի է ընկալում իրեն վերապահված ազատությունները, իրավունքներն ու պարտականությունները: Այդ տեսակետից, օրինակ, հետխորհրդային մի շարք հասարակություններում արևանտյան ազատականության շատ արժեքներ չունեին դրսելուրման անհրաժեշտ պայմաններ և այդ պատճառով էլ «սոցիոնշակութային ճառագայթման» ենթակեցին այդ հասարակությունների համակեցության ավանդական սկզբունքները:

Ազատականության սոցիոնշակութային ճառագայթման հետևանքով

հայ քաղաքացին այսօր ժողովրդավարության և քաղաքակրթության սոցիոնշակութային շատ արժեքներ գնահատում է իր տնտեսական ծանր պայմանների համատեքստում: Հանգամանքների թելադրանքով հասարակության մի զգալի մասը դեկավարվում է գոյատևման տնտեսական արժեքներով: **Ժողովրդավարությունը** և ապահովվածությունը դարձել են երկու իրարամերժ այլընտրանքներ: Քննարկվող հարցի տեսանկյունից ուշագրավ է, որ մարդիկ ժողովրդավարությունը (մեր դեպքում՝ ազատականությունը) կապում են նոր քաղաքական համակարգի հետ, իսկ ապահովվածությունը՝ նախորդի: Ընդ որում, հոգեբանական-իռացիոնալ մակարդակում սոցիալ-տնտեսական ու հոգևոր ճգնաժամը կապվում է ժողովրդավարության հետ և սոցիալապես անպաշտպան խավերը երբեմն պատրաստ են «Վերադարձնել» իրենց ազատություններու ու իրավունքները և «Վերադառնալ» նվազագույն ապահովության նախորդ բաշխման համակարգին, ուր մարդկանց կարգավիճակը նախապես տրված էր և այն պաշտպանելու համար հարկ չկար մտնել մրցակցության դժվարին ու ջանք պահանջող ամենօրյա գործունեության մեջ: Բայց ազատական քաղաքական համակարգի նկատմամբ բացասական վերաբերմունքը միայն տնտեսական անապահովության արդյունք չէ: Միայլ կլինի մտածել, թե հայ քաղաքացին, որին բնորոշ է նաև անհատական գոյատևման կենսափիլսոփայությունը (նախաձեռնություն, հարմարվողականություն, հնարամտություն, զսպածություն և այլն), միայն տնտեսական անապահովության պատճառով կարող է հրաժարվել անկախությունից և ազատություններից: Առավել ևս, որ պետությունից տնտեսական աջակցության նրա ակնկալիքները միշտ էլ չափավոր են եղել: Նրա ակնկալիքներն ավելի շատ վերաբերում են օրինականությանն ու սոցիալական արդարությանը: Պետական պաշտպանվածությունից զրկված հայ անհատը, հարյուրամյակներ շարունակ ապրելով սահմանային իրավիճակներուն, կարողացել է մշակել գոյատևման անհատական կենսաձև: Աղետագեն այս տարածաշրջանում հայկական ոգին դրսելորել է նաև դաժան հավաքվածություն և կազմակերպվածություն, և քաղաքական կազմակերպումի բացակայության պարագայում անգամ գործել է ներազգային համերաշխության սկզբունքով:

Ի տարբերություն խորհրդային շատ հանրապետությունների, մեզանում համակարգային բարեփոխումների շարժառիթները, ինչպես նաև

շարժման ժողովրդավարական պատկերացումները շատ ավելի անանձնական էին: Այն մի կողմից արտահայտում էր ազգային գաղափարախոսության պահանջատիրական ուղղվածությունը (պատմական արդարություն), մյուս կողմից՝ միտված էր հասարակական կյանքում ազգային կենսածի վերահստատմանը (սոցիոնշակութային արդարություն):

Անդրադառնալով քաղաքական և հոգևոր իշխանությունների տարանջատման սկզբունքին, հարկ է նշել, որ ազգի քաղաքական և հոգևոր կազմակերպումները հակադրություններ չեն: Պարզապես անհրաժեշտ է, որ քաղաքական ազգի ձևավորման հիմքում ընկած լինեն ազգի հոգևոր ու սոցիոնշակութային արժեքները: Քաղաքական հայրենիքը պետք է կառուցվի հոգևոր հայրենիքի հաստատում հիմքերի վրա: Վերջին հաշվով պետականությունը ոչ միայն ազգի քաղաքական կազմակերպման ձև է, ինչն ինքնին հասկանալի է, այլև ազգային հավաք գոյատևման ու ներազգային հոգևոր ու քարոյական դաշինքի ձև: Այս առնչությամբ դժվար չեն կատել, որ իշխող քաղաքական համակարգը մեզանում ելակետային սխալ է թույլ տվել: Այս տարիների փորձը ցույց է տալիս, որ քաղաքական համակարգը փորձում է ներազգային ժողովրդավարական հարաբերություններ ու կարգավորվածություն հաստատել վերևից ներքև՝ ազատական քաղաքական համակարգի ձևավորման և համապատասխան արժեքների տարածման միջոցով ի վերջո ձևավորել նաև հոգևոր ու սոցիալական համակարգեր:

Վերևից ներքեւ կարգավորվածություն հաստատելու սկզբունքը ընկած է արևանյան և հատկապես ամերիկյան ժողովրդավարության հիմքում: Նույն սկզբունքը, բոլորովին այլ նպատակներով, գործադրվեց նաև խորհրդային համակարգում: Նկատենք, սակայն, որ և ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի պարագաներում դրված էր ազգ ձևավորելու, ավելի ծիշտ՝ միատար էրնիկ հիմքեր չունեցող դաշնության քաղաքացի ձևավորելու խնդիր: Ինքնին հասկանալի է, որ հոգևոր ու սոցիոնշակութային միասնական հիմքեր չունեցող ամերիկյան ազգային խառնարանում ներպետական կյանքի կարգավորման լավագույն և արագ ներդրվող միջոցը շուկայական հարաբերություններն ու անհատի առաջնայնության սկզբունքն էր: ԽՍՀՄ-ը նույն խնդիրն ուներ, բայց զնաց գաղափարական ու սոցիոնշակութային պարտադրանքների ճանապարհով: Առաջադրված խնդրի տեսակետից (վերազգային քաղաքացի) քաղաքակրթական երկու փորձն էլ պատմականո-

րեն հիմնավորված էին՝ անկախ նրանից, թե որ ուղին էր ավելի արդյունավետ ու կենսունակ: Արդարացի սոցիալական կարգեր հաստատելու արևանյան քաղաքական քաղաքականությունը (հատկապես ֆրանսիական) ևս կառուցված է վերևից ներքեւ ժողովրդավարություն հաստատելու սկզբունքի վրա: Այս դեպքում, սակայն, շարժարիթը այդ երկրների էթնոմշակութային հարաբերություն:

Անդրադառնալով քաղաքական և հոգևոր իշխանությունների տարանջատման սկզբունքին, հարկ է նշել, որ ազգի քաղաքական և հոգևոր կազմակերպումները հակադրություններ չեն: Պարզապես անհրաժեշտ է, որ քաղաքական ազգի ձևավորման հիմքում ընկած լինեն ազգի հոգևոր ու սոցիոնշակութային արժեքները: Քաղաքական հայրենիքը պետք է կառուցվի հոգևոր հայրենիքի հաստատում հիմքերի վրա: Վերջին հաշվով պետականությունը ոչ միայն ազգի քաղաքական կազմակերպման ձև է, ինչն ինքնին հասկանալի է, այլև ազգային հավաք գոյատևման ու ներազգային հոգևոր ու քարոյական դաշինքի ձև: Այս առնչությամբ դժվար չեն կատել, որ իշխող քաղաքական համակարգը մեզանում ելակետային սխալ է թույլ տվել: Այս տարիների փորձը ցույց է տալիս, որ քաղաքական համակարգը փորձում է ներազգային ժողովրդավարական հարաբերություններ ու կարգավորվածություն հաստատել վերևից ներքև՝ ազատական քաղաքականության միջոցներով սոցիոնշակութային ու հոգևոր նոր արժեքների պարտադրման ուղղով: Էլիտարիզմի սկզբունքներով կառուցված քաղաքական համակարգը, որպես կանոն, մտահոգված է ոչ այնքան հասարակությանը իշխանության անհարկի միջամտություններից պաշտպանությամբ, որքան նրանով, թե ինչպես թուլացնի հասարակության մեջամասնության պաշտպանական ու ապահովագրական մեխանիզմները, որպես զի ազգային ու պետական շահերը առավել «ճիշտ» գիտակցող քաղաքական ընտրանին կարողանա ազատ գործել:

Վերադառնալով էլիտար ժողովրդավարության սկզբունքով դեկավարվող քաղաքական համակարգի «սոցիոնշակութային պարտադրանքների» քաղաքականությանը, պետք է նկատել, որ հոգևոր իշխանության պարտավորություններ ստանձնած Յայաստանի քաղաքական համակարգի առջև ծառացած խնդիրները բոլորովին այլ են: Ինքնին հասկանալի է, որ մեր քաղաքական համակարգը պետք է զբաղվի «քաղաքական ազգի» ձևավորման խնդիրներով, նպաստի ազգի ինքնության ու գոյատևման կենսափիլիստիկայության արդիականացմանը, ազգային կերպարի ստեղծմանը և քաղաքակրթության շրջանակներից դուրս չմնալուն: Բայց պետականական միջոցներով ներազգային կյանքի կարգավորման խնդիրը լուծելիս հայոց քաղաքական համակարգը պետք է հենվի համակեցության ազգային ավանդույթների վրա և ոչ թե անտեսի ու բացահայտ դրանք: Այսինքն՝ օգտագործի կայունության ու կարգավորվածության ամենօրյա արտադրության կազմակերպման ազգային պատմական

փորձը: Մինչեւ քաղաքական ուժերի ու իշխանությունների գործունեությունը ոչ այնքան միտված է ազգային ինքնության արդիականացմանը, որքան նրա հիմնավոր վերափոխմանը: Սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարեփոխմանը փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, ուր անտեսվում են ազգային ավանդույթներն ու համակեցության սոցիոնշակութային կարգավորիչները, հասունանում է «մշակութային բունտ», ձևավորվում են տվյալ քաղաքական համակարգը բացասող գաղափարներ: Վերջին հաշվով մշակույթը ոչ միայն ժառանգություն է, այլև այլնտրանքային իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու մեխանիզմ:

Կարելի է ասել, որ ներազգային կայունության ու կապերի ազգային առանձնահատկությունների անտեսման հաշվին ազատականության ու անհատի առաջնայնության սկզբունքների կիրառումը սոցիոնշակութային ավանդույթների վրա քաղաքական բռնության յուրահատուկ ձև է, որն, ի վերջո, կարող է հանգեցնել «ներքին գաղութացման»: Ավելին, «նմանակնան էքսպանսիան» ձևավորում է կյանքը կազմակերպող այնպիսի քաղաքական համակարգ, որի հիմնական խնդիրը դառնում է հասարակության վրա սոցիոնշակութային բռնություն գործադրելը: Վտանգն այն է, որ նման դեպքերում ազգը կորցնում է քաղաքական համակարգի ձևավորման և նրան պահանջներ ներկայացնող սուրբեկտի իրավունքները:

Ազգի սոցիոնշակութային կեցությունը և, ընդհանրապես, հասարակական կյանքի գործունեության ձևերը իրենց մշակութային դրսևորումներով կատարում են «էթնոպաշտպանական գործառույթ» և որոշ հանգամանքներում դառնում ազգի ինքնահաստատման, ինքնության դրսևորման և ինքնապաշտպանության միջոց: Նկատենք նաև, որ էթնոնշակութային կեցությունը գործունեական կեցություն է և ենթադրում է սոցիալապես կազմակերպվելու որոշակի եղանակ ու ձև: Եվ հակառակը, սոցիալապես կազմակերպվելու եղանակն ու սկզբունքները ենթադրում են էթնոնշակութային որոշակի դաշտ ու պայմաններ: Տեղին է նկատել, որ շուկայական հարաբերություններն ու անհատի առաջնայնության սկզբունքը (ազատականության արժեքները) ինքնին սոցիալապես կազմակերպվելու եղանակներ չեն: Այդ արժեքները համակարգաստեղծ գործուներ կարող են դառնալ երկու դեպքում: Առաջին՝ եթե ձևավորվում են հակաշռող ու հակազդող մեխանիզմներ՝ քաղաքացիական հասարակության այնպիսի սո-

ցիալական կառույցներ, ինչպիսիք են հասարակական տարրեր տեսակի հիմնարկությունները: Երկրորդ՝ պահպանվում են ավանդական ազգային սոցիալական կապերի հնատիտուտները (մեր դեպքում՝ ընտանիքը, համայնքը, ազգակցական կապերը և այլն): Վերոհիշյալ երկու պայմաններից առաջինը վերաբերում է սոցիալական կազմակերպվածության արևմտյան-ժողովրդավարական քաղաքացիական հնատիտուտին, իսկ երկրորդը՝ էթնիկ: Մրանք, անշուշտ, իրարամերժ և հակադիր արժեքաբանական պայմաններ չեն: Քաղաքացիական հասարակություն կառուցելու արևմտյան փորձն իսկ ցույց է տալիս, որ պետական ու ազգային համախմբվածության և համակեցության կայուն հիմքեր ստեղծելու նպատակով այդ հասարակություններում մեծ ուշադրություն է դարձվում կրոնին, ընտանիքին, հայրենասիրությանը եւ այլն: Պատահական չէ, որ անհատի առաջնության սկզբունքը պաշտպանող ամերիկյան ազատական կենսափիլիսոփայության մեջ ընտանեկան հովվերգությունը համակեցության խորհրդանիշներից ամենաքննարականն է և հավակնում է դառնալ նոր աշխարհի գաղափարախոսության անկյունաքարերից մեկը: Ժամանակակից արևմտյան քաղաքակրթությունը թեև մեծ դժվարությամբ, բայց դեռևս կարողանում է աշխարհին պարտադրել անհատի առաջնայնության սկզբունքը: Դետիսորիդային և հետսոցիալիստական շատ երկրներում արևմուտքը գրեթե չհանդիպեց դիմակայության, քանի որ այդ երկրների քաղաքական համակարգերը «ինքնակամ» ենթարկվեցին ընդորինական էքսպանսիայի: Բայց Չինաստանի և ասիական մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ ազատականությունը իրական հաջողություններ կարող է ունենալ նաև սոցիալական կորպորատիվ համայնքների ու նրանց սոցիոնշակութային ավանդույթների պահպանման պայմաններում:

Մինչև վերջերս արևմտյան հետազոտողները սոցիալական համակարգերի առաջընթացն ու հաջողությունները անմիջապես ածանցում էին քաղաքական կառույցի տիպից ու պետականական ռեժիմից: Չբացառելով այդ հանագամանքը, հարկ է նշել, որ քաղաքակրթության ներկա փուլում ուրվագծվում է մրցակցության նոր ոլորտ՝ սոցիոնշակութային: Ըստ էության, արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների մրցակցությունը գործնականում հանգում է այն հարցին, թե ո՞ր դեպքում ազատականությունը առավել ցանկալի արդյունքներ կտա. անհատի առաջնայնության

սկզբունքի՝, թե՝ կայուն սոցիոմշակութային ավանդույթների և ավանդական կորպորատիվ կապերով հաճախնրված սոցիալական ամբողջական կառույցների, որոնք անհրաժեշտության դեպքում կատարում են նաև քաղաքացիական հասարակություններին բնորոշ հաստատությունների գործառույթ:

Հոգևոր իշխանության գործառույթ ստանձնած Հայաստանի քաղաքական համակարգի այս տարիների գործունեությունը որոշ ինաստով կարելի է բնութագրել «փախուստ Արևելքից»: Այդ համակարգի սոցիալ-քաղաքական ու տնտեսական ծրագրերը հաճախ սահմանափակվում են արևմտյան ինստիտուտների մեխանիկական ընդօրինակնամբ: Փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարության ինֆրաստրուկտուրայի կառույցներն ու ինստիտուտները ավելի արագ են ստեղծվում, քան դրանց արդյունավետ գործառնության համար անհրաժեշտ փորձը, կամքն ու համապատասխան մշակույթը: Մեր դժբախտությունն այն է, որ հրաժարվեցինք անցյալից, բայց չընդունեցինք ներկան: Հոգեբանական մակարդակում այդ «սոցիոմշակութային դատարկությունը» դրսնորվում է «անցյալի ու ներկայի», «մասնավորի ու հասարակականի», «առասպելի և իրականության», «արդարության և հնարավորության», «ապահովածության և անորոշության» անտինոմիաների ձևով: Վերոհիշյալ անտինոմիաները համակարգային ճգնաժամի առօրյա-իռացիոնալ դրսնորումներն են, և քաղաքական համակարգը ներազգային ճգնաժամի պատճառները վերլուծելիս և հաղթահարման ուղիները որոշելիս պետք է ուշադրություն դարձնի ոչ այնքան մակրոկառուցվածքների, որքան դրանց ամենօրյա դրսնորումների վրա: Մասնավորապես:

1. Առօրյա մակարդակում սոցիոմշակութային ճգնաժամի պատճառներից մեկը քաղաքական հեղինակությունների և քաղաքական ուժերի արագ և հաճախ անհասկանալի հերթափոխումն է: Զարգացման ամեն մի փուլ ծնում է իրեն բնորոշ հեղինակություններ: Քաղաքական տրանսֆորմացիաների առաջին շրջանում իշխող և ընդդիմադիր քաղաքական ուժերից շատերը օգտվում էին «յուրայինի» կարգավիճակից, և քանի դեռ չէին հասել քաղաքական իշխանության, համարվում էին հոգևոր իշխանություն և հոգևոր առաջնորդներ: Սոցիալ-տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհնան բացասական հետևանքներն ու անօրինականությունները չճաշակած հասարակության մեծամասնությունը հավատում էր

ազատականության և ժողովրդավարության սոցիոմշակութային իմպերատիվներին և դրանք պաշտպանող քաղաքական ուժերին: Հաջորդ փուլում, երբ սկսվեց այդ իմպերատիվների իրացման գործընթացը, քաղաքական գորեթե ողջ համակարգը «յուրայինից» վերածվեց «օտար» և «քանդող» ուժի, որի հիմնական նպատակը քաղաքական իշխանության լժակների օգնությամբ նաև սոցիալական իշխանության հասնելն էր: Ժողովրդական ակնկալիքների դաշտում այսօր իշխում է «կառուցող» և «արդարամիտ» քաղաքական ուժի և դեկավարի պահանջարկը: Փաստորեն իշխանության փոփոխության և լեգիտիմության նոր ձևերի փնտրութքը ընթանում է ոչ միայն ինստիտուցիոնալ մակարդակում, այլև առաջնորդների: Այս առնչությամբ ուշագրավ է ռուսական փորձը: Թեև Ռուսաստանում քաղաքական համակարգը Ելցինից հետո սկզբունքային փոփոխության չի ենթարկվել, բայց նրանց նոր պրեզիդենտը հասարակության մեծամասնության կողմից ընկալվում է որպես կառուցող և սոցիալ-տնտեսական համակարգը վերականգնող առաջնորդ և այդքանով էլ նպաստում իշխանության լեգիտիմացմանը:

2. Համակարգային փոխակերպումների առօրյա մակարդակում սոցիոմշակութային ճգնաժամի պատճառներից մեկն էլ սոցիալական ընտրանու մասին պատկերացումների փոփոխությունն է: Չնանրամասնելով պատճառները, նկատենք միայն, որ անցումային շրջաններում ժողովրդավական պատկերացումներում սոցիալական նոր ընտրանին դրական կերպար չէ և շատ հաճախ ընկալվում է որպես անօրինական ճանապարհով ազգային հարստությունը զավթած «վերնախավ»: Բացի այլ նկատառումներից, նաև այս հանգամանքը հաշվի առնելով, օրինակ, Ռուսաստանի Դաշնության պրեզիդենտը որոշ օլիգարխների նկատմամբ խստություններ բանեցնելու ճանապարհով փորձում է փոխել սոցիալ-տնտեսական ընտրանու մասին բացասական պատկերացումները և այդ խավի կարգավիճակը ևս լեգիտիմացնել:

3. Առօրյա մակարդակում քաղաքական համակարգի հոգևոր ճգնաժամի պատճառներից մեկն էլ պատասխանատվության ինստիտուտի բացակայությունն է: Փոխարենը՝ որպես կանոն, մեղադրվում է այս կամ այն ուժին «իշխանության բերած» ժողովուրդը: Անշուշտ առողջ հոգի ունեցող ազգը չի կարող իր կենսափորձից դեն շպրտել անցյալը և պատասխանատվության իր բաժինը: Բայց, որպեսզի իրականում աշխատի քաղաքա-

կան պատասխանատվության ինստիտուտը, անհրաժեշտ է ստեղծել իշխող քաղաքական ուժին և նրա գաղափարախոսությունը հասարակությունից տարանջատող մեխանիզմներ, որպեսզի հնարավոր լինի ճշտել սխալների ինստիտուցիոնալ ակունքները, և ամբողջ մեղքը չբարդել հասարակության վրա:

4. «Ընդօրինակման էքսպանսիայի» հետևանքով առօրյա մակարդակում դրսնորվող սոցիոնշակութային ճգնաժամի պատճառներից մեկն էլ մարդկային հարաբերությունների ռացիոնալացումն ու անդեմացումն է: Գոյության ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը այդպես էլ չի անցել դասական հասարակարգերի լրիվ և ամբողջական փուլերը: Բացի այդ, հայ ժողովուրդի քանակական կազմը, արյունակցական-ազգակցական կապերի գործե համազգային ցանցը, ինչպես նաև գյուղական հանայնքների գերակայությունը մարդկային հարաբերություններին հաղորդել է պատասխանատու կախվածության հոգեբանական երանգներ: Այս յուրահատուկ ազգային հարստությունը կարող էր դառնալ համազգային քաղաքական որակ, եթե համարժեք պատասխանատու կախվածության վերաբերմունք դրսնորեր նաև քաղաքական համակարգն ու նրա միջուկը կազմող իշխանությունը:

5. Ազատականության արժեքների մեխանիկական ընդօրինակման հետևանքով մարդկային առօրյա-փոխհարաբերություններում ձևավորվում է իրականության փոխբացառող երկու մոտեցումներ, որոնք ևս դառնում են ճգնաժամի պատճառներ: Բանն այն է, որ միաժամանակ գործում են իհն և նոր սոցիոնշակութային դաշտեր (և դրանց համապատասխան սոցիալական խավեր), որոնք նաև գործառնում են տարբեր ռիթմով ու ուղղությամբ, ինչի հետևանքով կյանքը ընթանում է երկու տարբեր արագություններով: «Դանդաղ» և «արագ» ժամանակների մարդիկ միմյանց նկատմամբ ունեն ագրեսիվ կողմնորոշումներ: Բնիշտ է, Յայաստանի պարագայում այդ կողմնորոշումները չեն վերածում սոցիալական բախումների, բայց չեն էլ նպաստում ներազգային համերաշխության ու ինքնակազմակերպմանը: Ի հավելումն այդ անենի, մեզանում այդպես էլ չստեղծվեցին պահանջների ու պահանջմունքների ձևավորման և լեգիտիմացնան ինստիտուցիոնալ կառույցներ: Ցանկացած քաղաքական համակարգ պետք է ունենա մասսայական հավակնությունների ինստիտուցիոնալացման միջանկյալ ներկայացուցչական օլակներ՝ քաղաքական ու

հասարակական կազմակերպություններ, որոնք «քաղաքակրթեն» մարդկանց հավակնությունները և համապատասխանեցնեն թե երկրի հնարավորություններին, թե ազգային ինքնությանը և թե տվյալ պահանջները ներկայացնող խավերի իրական շահերին, դերին ու դիրքին: Քաղաքական համակարգը շատ ավելի արդյունավետ կգործի և կպահպանի իր լեգիտիմությունը, եթե մարդկանց հավակնությունների ու պահանջմունքների ձևավորումը չթողնի ինքնահոսի: Ըստ Էւլիքան մեր քաղաքական համակարգը դեռևս չի մշակել ազգային շահերին ու ինքնությանը համապատասխան հոգևոր-բարոյական քարոզության հայեցակարգ և հասարակության հետ հետադարձ կապի գործուն մեխանիզմներ: Ավելին, ինքնահաստատման խնդիրներ ունեցող քաղաքական կուսակցությունները, շատ հաճախ շահարկելով մարդկանց սոցիալական ծանր վիճակը, անիրագործելի խոստումներով հրահրում են այնպիսի պահանջներ, որոնք իրոք չեն համապատասխանում պետության հնարավորություններին: Իր ներսում ընդդիմադիր քաղաքական համակարգը, ելելով քաղաքական մրցակցության տրամաբանությունից, (նի դեպքում ժամանակակից երևալու, մեկ այլ դեպքում՝ սոցիալական ուղղվածությունն ընդգծելու նկատառումներով), փաստորեն լեգիտիմացնում է այնպիսի պահանջներ ու պահանջմունքներ, որոնք հակասում են նույնիսկ քաղաքական համակարգի նպատակներին:

6. Առօրյա մակարդակում սոցիոնշակութային ճգնաժամի դրսնորումներից առավել վտանգավոր է պահանջների ու պահանջմունքների «սառեցումն» ու գոյատևման նվազագույն չափորոշիչներին հարմարվելու համընդհանուր հոգեբանությունը: Ինքնին հասկանալի է, որ նվազագույն պահանջմունքներին համակերպված հասարակությունը քաղաքական համակարգին և հատկապես իշխանությանը հանգիստ կյանք է երաշխավորում: Բայց երբ ազգի մեծամասնությունը տևական ժամանակ ապրում է միայն հացիկ խնդիրներով, երկիրը կորցնում է զարգացման ներքին շարժադրմները, իսկ քաղաքական համակարգը՝ գգոնությունը: Պարադոքսն այն է, որ կենցաղային գսպվածությունն ու «ընթանումով» ապրելը աստիճանաբար վերածում են հոգևոր խեղճության: Ի դեպք, հետխորհրդային և հետսոցիալիստական շատ երկրների փորձը ցույց է տալիս, որ մարդկանց անարձագանք պահանջները հաճախ վերածում են քաղաքականի, և այդ երկրների քաղաքական համակարգերը ստիպված դիմում են

արհմիությունների, քաղաքացիական նախաձեռնությունների և հասարակական կազմակերպությունների օգնությանը, որպեսզի կարողանան մասսայի պահանջների «առօրյա լեզուն» քաղաքականացնել և հուզական դաշտից տեղափոխել ռացիոնալ դաշտ:

«Դոգլոր խեղճությունը» շարժիչի դեր կատարող պահանջմունքներ չունի, չունի նաև հուզական և ըմբոստ լեզու և այդ պատճառով էլ մեզանում այդ լեզուն քաղաքականացնող ու քաղաքացիականացնող ինստիտուտների պահանջարկ չկա: Դա է պատճառներից մեկը, որ մեզանում քաղաքացիական հասարակության ծևավորումը չունի ներքին խթան: Ահա թե ինչու մեզանում քաղաքական համակարգը օտարված է սոցիալական ինստիտուտներից և միջնորդ իրավարարի կարիք չի գգում: Պետությունը և իշխանությունները քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ կառույցների գոյության անհրաժեշտությունը գգում են այն ժամանակ, երբ հասարակությունը ներքնապես ակտիվ է և իր դժգոհություններով կարող է իրահել սոցիալ-քաղաքական զանազան անկանխատեսելի շարժումներ: Այդ տեսակետից Հայաստանում, դժբախտաբար, քաղաքացիական հասարակության ծևավորման սոցիալական և բարոյահոգեբանական լուրջ նախադրյալներ դեռևս չկան: Ի հավելում դրան, խարիսխել են նաև քաղաքացիական համախմբվածության ազգային-պահական կառույցների հիմքերը: Երկու կարևոր իրողություններ, որոնք մեկ անգամ ևս փաստում են, որ մեր քաղաքական հանակարգը ազատականությունից իրական ժողովորդավարության անցնելու լուրջ խնդիրներ ունի: Անառարկելի իրողություն է, որ ազատական հասարակությունների քաղաքական համակարգերը մարդկանց չեն դիտում իրենց ճակատագիրը և շահը գիտակցող քաղաքական կոլեկտիվ սուբյեկտ և գտնում են, որ ժողովորդավարությունը միայն ընտրանուն բնորոշ պահանջմունք է: Պետք է փաստել, սակայն, որ մեզանում հասարակության «ներփակված դժգոհության» պատճառն այն չէ, որ իր փոխարեն քաղաքական վճիռներ է կայացնում պրոֆեսիոնալ քաղաքական փոքրամասնությունը: Կյանքը քաժանելով քաղաքականի և առօրյայի, իրեն վերագրելով քաղաքական վճիռներ կայացնելու, իսկ զանգվածին՝ կենցաղով ապրելու իրավունք, քաղաքական իշխանությունը կենցաղի կազմակերպման պայմաններ չի ստեղծում: Ներազգային կյանքի լրիվ ապակենտրոնացումը և առընթեր հոգսը դարձել են մարդու քաղաքացիական իրավունքների վրա բռնու-

թյան յուրահատուկ դրսևորումներ: Եթե այդ տեսակետից դասակարգենք սոցիալ-տնտեսական դժգոհությունների բացահայտ ու քողարկված շարժառիթները, ապա պետականության և ողջ քաղաքական համակարգի համար առավել վտանգավոր կարող են լինել ոչ թե «ուտելու և խմելու» անբավարարվածության պատճառով ծագած հուզումները, այլ այն դժգոհությունները, որոնց շարժառիթը առօրյա կյանքում քաղաքացիական ու ազգային կոլեկտիվ սուվերենության վերականգնումն է:

Յետխորհրդային հասարակությունների ներկայացուցչական-ժողովրդավարական գաղափարախոսությունը և դրա հիմնա վրա կազմակերպված ընտրություններն ու քարոզչությունը ցույց են տալիս, որ քաղաքական ուժերի մեծ մասը մարդուն դիտում է սոցիալական պատկանելիությունից ու համապատասխան սոցիոնշակութային չափորոշչիններից գուրկ և միայն անձնական պահանջմունքներով ապրող «միայնակ մարդ», որին կարելի է իր կողմը գրավել նյութական ինչ-ինչ խոստումներով: «Ազատ ընտրազանգվածի» ազատական գաղափարախոսությունը ելնում է գործնական նպատակներ հետապնդող այն մտայնությունից, թե մարդկանց սոցիալական պատկանելության և քաղաքական նախասիրությունների միջև չկան կայուն պատճառահետևանքային կապեր և նրանց քաղաքական ուղեծիրը կարելի է փոխել այս պահի ինչ-ինչ նյութական խոստումներով: Մարդկանց սոցիոնշակութային կողմնորոշումները անտեսելու շարժառիթները տարբեր են: Մի դեպքում՝ որպես հիմնավոր շարժառիթ օգտագործվում է այն փաստը, որ նախորդ կացութաձևի փոփոխության հետևանքով սոցիալական տեղաշարժերը և դրանց համապատասխան արժեքային կողմնորոշումները դառնում են խիստ մոբիլ: Բայց հենց այդ պատճառով քաղաքական ուժերը պետք է շահագրգուված լինեն սոցիալական կայուն խմբերի ծևավորմամբ, որպեսզի ըստ այդմ էլ ձեռք բերեն սոցիալական կայուն հենարան: Մեկ այլ դեպքում՝ չկայացած քաղաքական ուժերը շահագրգուված են, որ մարդկան հստակ զիտակցեն իրենց սոցիալական պատկանելությունն ու շահը, մնան նվազագույն պահանջմունքների մակարդակում, որպեսզի չհանախմբվեն և իրենց սոցիալական միջավայրը չհանախմբեն որպես սոցիալական ուժ:

Եթե նկատի ունենանք, որ քաղաքական համակարգը ֆունկցիոնալ կախվածության մեջ գտնվող և քաղաքական ընդհանուր ծրագրի շրջանակներում գործող քաղաքական բարդ ինստիտուտ է, որի հիմնական

Փունկցիան ներազգային կյանքում կայունության ու կարգավորվածության քաղաքական արտադրության կազմակերպումն է, ապա հասարակության սոցիալական տրոհումը նրա համար չի կարող դառնալ հեռահար նպատակ: Ի վերջո, քաղաքական համակարգի նորմալ գործառնությունը մեծապես պայմանավորված է իր տրամադրության տակ առկա հնարավորություններից՝ հասարակության վրա ունեցած իշխանությունից, մարդկանց վարքի ու նոտածողության վրա ունեցած ազդեցությունից և այլն: Այդ հնարավորություններից մեկն էլ հասարակության համախմբվածության աստիճանն է: Համրահայտ փաստ է, որ

1. Հասարակությունը որքան ինքնակազմակերպված է, այնքան հեշտ կլուծի իր պրոբլեմները և քաղաքական համակարգին կազատի լրացուցիչ ծանրաբեռնվածությունից,

2. Համախմբված ու կազմակերպված հասարակության պահանջներն ու պահանջնունքները ավելի հեշտ է վերածել քաղաքական պատվերի և գտնել համապատասխան քաղաքական լուծումներ,

3. Սոցիալական այս կամ այն խնդիրն ու խավին մարդկանց կապվածության աստիճանը նպաստավոր պայմաններ է ստեղծում հասարակական կարծիքի դաշտի ծևավորման համար, առավել ևս, որ ավանդույթներն ու սովորույթները որոշակի պայմանականություններ են, որոնք կենսունակ են միայն «հասարակական կարծիքի» ինստիտուտի գործունության պայմաններում,

4. Ազգային ու պետական կյանքի ներքին կազմակերպվածությունը, վտանգներն օգալու և կանխելու համազգային ընկալունակությունը և, ի վերջո, հոգևոր ու բարոյական հուսալիությունը արտաքին անվտանգության ապահովման կարևոր նախապայմաններն են:

Ասվածից հետևում է, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ պատճառներով հոգևոր իշխանության ֆունկցիաներ ստանձնած Հայաստանի քաղաքական համակարգը՝ երկիրը սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական ու գաղափարա-քաղաքական ճգնաժամից դուրս բերելու, կայունության «քաղաքական արտադրություն» կազմակերպելու, ազատականությունից ժողովրդավարության անցնելու և, այդ ամենի արդյունքում, հայոց պետականության իիմքերը վերականգնելու, ներքին ու արտաքին անվտանգության իիմահարցերը լուծելու նպատակով, լիովին պետք է վերանայի սոցիոնշակութային քաղաքականությունը և վերականգնի հա-

մակեցության ազգային ավանդույթները, սոցիալական ինստիտուտները և դրանց հոգևոր իիմքերը:

Հայրենիքում ապրող մարդու ֆիզիկական գոյությունը համարժեք է չգոյության, եթե դեկավարվում է օտար սոցիոնշակութային պարտադրանքներով: Մեկ այլ առնչությանը Նժեհը գրում էր, որ «Այդ չարիքի դեմ պայքարել հնարավոր է միայն ցեղային արժեքների, առաքինությունների և սրբությունների խոր ճանաչումով ու վերապրումով, մի բան, որ իիմնավորեցի և անվանեցի Ցեղակրոնություն»:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման սկզբունքը

§ 1. Քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման նախապայմանները

Քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման հիմքում ընկած է երկրում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացների նկատմամբ քաղաքական համակարգի չեզոքության ապահովման սկզբունքը:

Ի դեպք, քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման նախնական (ավատատիրությունից կապիտալիստական հարաբերությունների անցման շրջան) շարժափթռ վերոհիշյալ երկու իշխանությունների ֆունկցիաների հստակեցումն էր, որի շնորհիվ աստիճանաբար ձևավորվեց մասնավոր շահի սկզբունքով գործող «տնտեսական շուկան» և ազգային ու հասարակական շահի սկզբունքով գործող «քաղաքական շուկան»։ Կարելի է ասել, որ այդ նույն սկզբունքը գործում է նաև հետխորհրդային հասարակություններում։ Անցումային փուլերում ժողովրդավարական հասարակության ձևավորումը և ընթանում է երկու մակարդակներում։ Մի կողմից՝ տնտեսական գործունեությունը տարանջատվում է քաղաքական և ադմինիստրատիվ իշխանությունից և ըստ հնարավորության «ապագատականացվում» և ենթարկվում շուկայի իշխանությանը, մյուս կողմից՝ «ազգայնացվում» ու պետականացվում։ Են իշխանական քաղաքական ֆունկցիաները և հանձնվում հարկադրանքի մոնոպոլ իշխանություն ունեցող պետությանը։ Սակայն կայացած ժողովրդավարական երկրների փորձն իսկ ցույց է տալիս, որ արդի հասարակությունները այդպես էլ չկարողացան ստեղծել ապահովագրական մեխանիզմների այնպիսի համակարգ, որն իսպառ բացառել քաղաքական և տնտեսական իշխանությունների «հանցավոր» մերձեցումը։ Բավական է նշել, որ արդի քաղաքական արտադրության մեջ քաղաքականությամբ գրաղվողների

համար պետականորեն սահմանված «վճարը» համարժեք չէ այն ծախսերին, որ քաղաքական գործիքն ու քաղաքական ուժերը օգտագործում են իշխանությունը պահելու կամ իշխանության հասնելու համար ծավալած ընտրապայքարում։ Այդ իսկ պատճառով էլ քաղաքական և տնտեսական ընտրանին հաճախ փոխադարձ «ծառայությունների» պայմանավորվածությամբ համագործակցում են՝ ստեղծելով փոխադարձ հովանավորչության ալյանս։ Այդ ամենի հետևանքով ընտրազանգվածի ժողովրդավարական սուվերենության լեգիտիմությունը խախտվում է ֆինանսական ընտրանու կողմից, ինչի հետևանքով, ի վերջո, պետությունը ևս կարող է կորցնել քաղաքական որոշումներ կայացնելու սուվերենությունն ու լեգիտիմ մեջիշխանությունը։ Այդ տեսակետից հետխորհրդային գրեթե բոլոր հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում, սեփականության ապագատականացման գործընթացները մասսամբ պահպանում ու դրսերում են «իշխանության ապագատականացման» որոշ միտումներ։ Եթե առաջինը նպաստեց շուկայական հարաբերությունների ձևավորմանը, ապա երկրորդը՝ անօրինականության ու կոռուպցիայի արմատավորմանը, դրանով իսկ խոչընդոտելով նաև իրական շուկայական հարաբերությունների ձևավորմանը։ Քաղաքական ու տնտեսական իշխանությունների փոխհովանավորչական մերձեցման հետևանքով սպառողից ու պահանջարկից ձեռներեցի կախվածության սկզբունքը աստիճանաբար վերածում է քաղաքական իշխանությունը անձնական շահին ծառայեցնող շինուվնիկից կախվածության սկզբունքի։

Քաղաքական ու տնտեսական իշխանությունների փոխհովանավորչական այլանսը, և դրա հետևանքով իշխանության անլեգալ ապագատականացումը վտանգավոր է նաև այն պատճառով, որ իշխանության քաղաքական որոշումները վերածվում են «հատուկ» շուկայի ապրանքի և ինչ-ինչ հանգամանքներում կարող են վտանգել ազգային ինքնիշխանությունը։ Փոխհովանավորչական այլանսի ձևավորումը վերջին հաշվով բացասաբար է անդրադարձում թե շուկայական հարաբերությունների և թե քաղաքական համակարգի ձևավորման ու կայացման վրա։ Երկու դեպքում էլ խախտվում է առաջարկի ու պահանջարկի հարաբերակցության հանրահայտ սկզբունքը։

Հանրահայտ փաստ է, որ ազգային բացակցության տնտեսական շուկան գործունեության այնպիսի դաշտ է, ուր իշխողի ու թելադրողի դերում հան-

դես են գալիս նոր տիպի ու որակի պահանջնունքները: Այսինքն՝ շուկայական հարաբերություններում միակ «օրենսդիր» մարմինը սպառողն է, որն իր պահանջարկով նպաստում կամ խոչընդոտում է ծեռներեցի կայացմանն ու հաջողություններին: Շուկայական տնտեսության մեջ արտադրող-ձեռներեցի ուժը կարող է վերաճել թուլության, եթե նա գործի հակառակ տնտեսական նպատակահարմարության: Այլ կերպ ասած, տնտեսվարողի հզորությունը սպառողների պահանջարկի իմացության մեջ է:

Քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման սկզբունքի խախտումը քացասաբար է անդրադառնում նաև քաղաքական համակարգի ձևավորման ու կայացման վրա: Բանն այն է, որ տարբեր սկզբունքներով գործող այդ իշխանությունների մերձեցման հետևանքով քաղաքական շուկայում խախտվում են օրինաչափություններն ու սկզբունքները: Եթե տնտեսական շուկայում միակ «օրենսդիր» մարմինը սպառողն է, ապա քաղաքական շուկայում ընտրողը: Բայց, ինչպես ցույց են տալիս տարբեր երկրներում գործածվող ու տարածված ընտրական տեխնոլոգիաները, ֆինանսական մեծածավալ ներդրումները քաղաքական համակարգին և նրա միջուկը կազմող իշխանություններին «լեզիտիմության» ավելի հուսալի երաշխիքներ են տալիս, քան ընտրազանգվածը: Նման դեպքերում քաղաքական շուկայում մասսայական «սպառողը» գորեք չի մասնակցում «քաղաքական ապրանքի» գնագոյացմանը: Այն որոշում է սոցիալ-տնտեսական ընտրանին, պետական բյուրոկրատական ապարատը, իսկ որոշ դեպքերում՝ նաև կլանային համակարգը:

Ցանկացած քաղաքական համակարգ ունի «ֆինանսական ճառագայթման» օբյեկտիվ հիմքեր: Բանն այն է, որ քաղաքական համակարգին բնորոշ է ներկայացուցական համերաշխության սկզբունքը, և նա չի կարող անտեսել առավել ազդեցիկ ու ակտիվ սոցիալական խավերի շահերը: Բայց չպետք է մոռանալ, որ քաղաքական համակարգը առաջին հերթին պետք է դեկավարվի ազգային միասնության սկզբունքով, ըստ որի սոցիալական առանձին խավերի շահերը ածանցյալ են ազգային ու պետական շահերից: Փաստորեն քաղաքական համակարգը մի դեպքում կատարում է տարանջատող գործառույթ, մեկ այլ դեպքում՝ ինտեգրույթ: Խնդիրը դրանց համատեղման մեջ է: Այդ համատեղումը անհրաժեշտություն է, քանի որ հասարակության զարգացման պատմական հեռանկարը չի կարելի միակողմանիորեն ածանցել սոցիալական ընտրանու շահերից:

Այլ կերպ ասած, քաղաքական համակարգը պետք է գործի որպես տարբեր սոցիալական ծրագրերի ու հեռանկարների մրցակցության կազմակերպման, իսկ հարկ եղած դեպքում նաև մրցակցությանը չդիմացող ու ինչ-ինչ պատճառներով դեռևս չկազմակերպված ու ինստիտուցիոնալ տեսք չստացած խավերի ու նրանց շահերի պաշտպանի հաստատություն:

Այդպիսին է արդյո՞ք Յայաստանի քաղաքական համակարգը:

Մանրամասն չանդրադառնալով Յայաստանում անցկացված սեփականաշնորհման քաղաքականության առանձնահատկություններին, նշենք միայն, որ անցնան առաջին փուլում քաղաքական իշխանության համար շուկայական հարաբերություններին անցնելը խիստ քաղաքականացված նպատակներ էր հետապնդում: Բանն այն է, որ համակարգային տրանսֆորմացիաների առաջին փուլում քաղաքական ընտրանին ավելի շատ հոգեբանական հենարան ուներ, քան սոցիալական: Դեռևս ձևավորված չեր սոցիալական այն խավը, որի շահերը կապված են քաղաքական նոր ընտրանու հետ: Բնական ճանապարհով նաև սոցիալական հենարանի ձևավորումը երկար ժամանակ կպահանջեր: Այդ իսկ պատճառով էլ շրջանառության մեջ դրվեց իշխանության աջակցության և հովանավորչության միջոցով սոցիալական նոր ընտրանու ձևավորման գաղափարը: Փաստորեն համակարգային վերակառուցումների առաջին փուլում սեփականաշնորհման նպատակը խիստ քաղաքականացված էր: Սի կողմից այն ուղղված էր քաղաքական հին համակարգի տնտեսական հիմքերի վերացմանը, մյուս կողմից՝ քաղաքական նոր համակարգի սոցիալական հենարանի ձևավորմանը: Առաջին հայացքից թվում է, թե քաղաքական այդ պրագմատիզմը արդարացված էր, քանի որ կարճ ժամանակահատվածում իրոք ստեղծվեց սոցիալական մի նոր խավ, որն իր տնտեսական դերով ու դիրքով պարտական էր քաղաքական նոր ընտրանուն: Դժվար չէ նկատել, որ քաղաքական վերահսավի գաղափարական բևեռացման և հասարակությունից օտարվելու այդ քայլերը չէին նպաստելու քաղաքական ազգի ձևավորմանը, և պետականության կազմակերպման իշխանության գործառույթը վաղ թե ուշ վերաճելու էր սոցիալ-քաղաքական ընտրանու քաղաքական կազմակերպման գործառույթի: Բայց, ինչպես ցույց են տալիս անցումային հասարակություններում իշխանափոխության գործընթացները, արտադրության փոխարեն վաճառքով ու վերավաճառքով

տնտեսական ինքնարավության հասած սոցիալական ընտրանին քաղաքական իշխանության համար միշտ չէ, որ «նվիրված» սոցիալական հենարան է դառնում: Ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական շուկայում նրանք ղեկավարվում են խիստ պրագմատիկ կողմնորոշումներով և հակված չեն կուսակցական հավատարմության: Չենց այն պատճառով, որ ազգային հարստության սեփականաշնորհման գործընթացում իշխում է քաղաքական հովանավորչությունը, ձևավորվում է սոցիալական ընտրանու մի հատուկ շերտ, որն իր սոցիալական դերի ու դիրքի համար պարտական ու պարտավորված է օգում ոչ թե պետության ու նրա տնտեսական քաղաքականությանը, այլ՝ իշխանության լծակ ունեցող նախկին ու ներկա հովանավորի առջև: Ոչ բնականոն ճանապարհով ձևավորված սոցիալական ընտրանին, որպես կանոն, ոչ մի քաղաքական ուժի համար կայուն հենարան չի դառնում: Նրանց համար ընդունելի է ցանկացածի հովանավորչությունը, հակառակ դեպքում նրանք հոգեբանորեն միշտ էլ պատրաստ են քաղաքական անակնկալ շրջադարձերի և իրենց «կապիտալի» փախուստի կազմակերպմանը: Անցումային հասարակություններին բնորոշ այս երևույթը կարելի է անվանել սոցիալական ոչ լեզիտիմ շերտավորում, ինչի հետևանքով մարդկանց մի խումբ տիրում է ինչ-որ բանի, բայց իրեն հոգեբանորեն դեռևս տեր չի օգում: Այստեղից բխում է երկու կարևոր հետևողական:

Առաջին քանի դեռ հասարակության սոցիալ-տնտեսական շերտավորումը չի ընթանում բնականոն ճանապարհով, անօրինական ճանապարհով հարստացած սոցիալական վերնախավի մի օգալի մասի քաղաքական հնարավորությունները գերազանցում են նրանց բարոյական ու ինտելեկտուալ ընդունակություններին: Այդ իսկ պատճառով էլ նրանք, որպես կանոն, քաղաքական համակարգի և իշխանության հետ կապվում են ոչ այնքան գաղափարական-աշխարհայցքային համոզմունքներով, որքան օգտապաշտ քաղքենու ժամանակավոր հավատարմությամբ, և ամեն անգամ, երբ ցնցվում են իշխանության հիմքերը, նրանք քաղաքական նոր «տաճիք» են փնտրում:

Երկրորդ՝ ելնելով իր վիճակի երկվությունից, սոցիալ-տնտեսական ընտրանին ինչ-որ պահից սկսած քաղաքականացվում է և արդեն հաջորդ փուլում, օգտագործելով իր տնտեսական լծակները, ակտիվորեն մասնակցում ու միջամտում է քաղաքական դաշտի ձևավորմանը: Նկատենք

նաև, որ քաղաքական ու սոցիալական ընտրանու համագործակցությունն ու փոխադարձ «հավատարմությունը» հավասարաչափ անհուսալի է: Այդ իսկ պատճառով էլ անցումային հասարակությունների քաղաքական ընտրանին ևս, օգտագործելով իշխանության ընձեռած հնարավորությունները, աստիճանաբար ծերք է բերում տնտեսական իշխանություն:

Դաշվի առնելով անցումային հասարակություններին բնորոշ քաղաքական և տնտեսական իշխանությունների մերձեցման և նույնացման վերոհիշյալ միտումները, կարելի է ասել, որ քաղաքական համակարգերը կամա թե ակամա կատարում են հասարակության տարանջատող գործառույթ: Ինչ խոսք, այդ գործելակերպը բնորոշ է ոչ թե ողջ քաղաքական համակարգին, այլ նրա իշխանության եկած թվին: Բայց, եթե հաշվի առնենք, որ այս տարիներին քաղաքական հիմնական ուժերը այս կամ այն չափով ու ձևով արդեն ճաշակել են «իշխանության կուսակցության» արտոնությունները, կարելի է ասել, որ վերոհիշյալ երևույթը բնորոշ է քաղաքական ողջ համակարգին:

Փոխակերպվող հասարակությունների փորձը ցույց է տալիս, որ ընթացող սոցիալ-տնտեսական վերափոխումները խիստ բացասական հետևանքներ են թողնում հասարակության սոցիալական նոր կառուցվածքի ձևավորման ու սոցիալական համագործակցության գործընթացների վրա: Նկատի ունենալով այդ հանգամանքը, կարելի է նշել, որ այսօր Յայաստանի քաղաքական համակարգի առջև ծառացած ներկա կարևորագույն խնդիրներից մեկը հասարակության վերախմբավորումն է: Խնդիրն այն է, որ սոցիալական պետություն հոչակած քաղաքական համակարգը պարտավոր է շուկայական հարաբերությունների պայմաններում անգամ, հատկապես առաջին փուլում, պաշտպանել անապահով խավերի շահերը և ղեկավարվել սոցիալական արդարության սկզբունքով: Նման քաղաքականության իրագործման համար անհրաժեշտ են.

Առաջին՝ հասարակության սոցիալական կառուցվածքը պետք է կազմված լինի ոչ թե ապահով փոքրանասնությունից և անապահով մեծամասնությունից, այլ տարբեր շահեր ունեցող սոցիալական խնդիրից: Որ հասարակությունը միշտ և ամենուրեք կազմված է տարբեր խնդիրից, ինքնին հասկանալի է: Բայց այսօր Յայաստանում սոցիալական գործեր բոլոր անապահով խավերի միակ շահն ու նպատակը գոյատևման խնդրի լուծումն է: Այդքանով էլ մեր հասարակությունը ամբոխացված է: Ավելին,

այդքանով և այդ պատճառով էլ հասարակությունը չունի տարբերակված սոցիալ-գաղափարական ու քաղաքական կողմնորոշումներ: Ինքնին հասկանալի է, որ նման իրավիճակում քաղաքական որևէ կուսակցություն չի կարող վստահաբար պնդել, թե սոցիալական որ խավն է իր կայուն հենարան ու գաղափարակիրը: Այս տեսակետից քաղաքական ռեժիմները իրարից տարբերվում են նրանով, որ մի դեպքում ընդունում և պաշտպանում է սոցիալական շահերի քազմազանությունը, իսկ մեկ այլ դեպքում՝

Երկրորդ՝ ներազգային կյանքի «վերահամախմբման» համար անհրաժեշտ է, որ քաղաքական համակարգը գիտակցի խմբային շահերի առանձնահատկությունները և դրանք արտացոլի իր ծրագրերում:

Երրորդ՝ ժողովրդավարության և քաղաքական քազմակարծիքայնության իրական վիճակը որոշվում է ոչ թե ընդհանուր հայտարարություններով, այլ այն բանով, թե տարբեր սոցիալական խմբեր կազմակերպվելու ինչ հնարավորություններ ունեն, ինչքանով են կազմակերպված և կարող են արդյոք քաղաքական միջոցներով պաշտպանել իրենց առանձնահատուկ շահերը: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է որպեսզի այդ խմբերի շահերը արտացոլված լինեն կուսակցական-քաղաքական ներկայացուցչական համակարգում:

Ասվածից հետևում է, որ քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման սկզբունքի տեսանկյունից կայունության ու կարգավորվածության քաղաքական արտադրություն կազմակերպելու նպատակով քաղաքական համակարգը և նրա միջուկը կազմող իշխանությունը պարունակուի:

1. ճշգրտել ու համաձայնեցնել ազգային ու պետական համակարգերի հիմնարար շահերը,

2. Շահերի համաձայնեցման ու բալանսավորման միջոցով ինտեգրել սոցիալ-տնտեսական տարբեր շահեր ունեցող խավերին,

3. Յրաժարվել սեփական սոցիալ-տնտեսական շահից և չեզոք դիրք գրավել հասարակության ներսում ընթացող տնտեսական գործընթացների նկատմամբ:

Ղժվար չէ նկատել, որ սոցիալ-տնտեսական բնագավառում սրանք այն հիմնական միջոցառումներն են, որոնք կարող են նպաստել «քաղաքական ազգի» ձևավորմանը: Վերոհիշյալ սկզբունքների նկատմամբ անցու-

մային հասարակության իշխանությունների վերաբերմունքը ցույց է տալիս, որ քաղաքական համակարգերը սոցիալական համագործակցությունը, տարբեր խավերի ինտեգրումը, անձնական շահերից զատ նաև հասարակական միասնական շահերի ձևավորումը լիովին չի դարձել «քաղաքական ազգի» ձևավորման անհրաժեշտ նախապայման: Բանն այն է, որ «քաղաքական ազգին» բնորոշ է ոչ միայն միասնական քաղաքական-իրավական դաշտը, օրենքների ու նորմերի ընդհանրությունը, այլև տնտեսական ընդհանուր շահերը: Նկատենք նաև, որ այնտեղ, ուր քաղաքական համակարգը նպաստում է «քաղաքական ազգի» ձևավորմանը, այնտեղ հասարակությունը առավել արդյունավետ մասնակցություն ու ներդրում կունենա անվտանգության հիմնախնդիրների լուծման գործընթացներում: Երբ քաղաքական համակարգը և, առավել ևս, նրա միջուկը կազմող իշխանությունը «մոռացության» է տալիս իր այդ առաջնահերթ պարտականությունը, անխուսափելիորեն ձևավորվում են «անտեսանելի ինստիտուտներ», որոնք երկրում ընթացող համակարգային փոփոխությունների ուղղորդման ու կարգավորման գործառույթը վերցնում են իրենց վրա: Արդյունքում, որպես կանոն, նպաստավոր պայմաններ են ստեղծվում ստերային տնտեսության և ստվերային իշխանության ձևավորման համար:

Քանի որ էլիտար ժողովրդավարությամբ ղեկավարվող անցումային փուլի քաղաքական համակարգերը փորձում են ազատականության սկզբունքները (շուկայական հարաբերություններ և անհատի շահերի առաջնայնություն) մեխանիկորեն ներդնել սոցիալական կյանքի կազմակերպման հիմքում, այդ իսկ պատճառով էլ հարց է առաջանում, թե քաղաքական համակարգի «նեղոքության» արևմտյան մոդելը գործնականում այդպիսին է, թե ոչ, և որքանով է կիրառելի անցումային խնդիրներ լուծող երկրներին:

Ամերիկյան հայտնի քաղաքագետ Դ. Խստոնը ներկայացուցչական քաղաքական համակարգը մեկնաբանում է որպես յուրահատուկ «կիրեռնետիկական սկ արկղ», որը չունի սեփական շահ, և իրեն ներկայացրած հասարակական տարբեր խավերի պահանջները ընդունում, վերլուծում և համապատասխան լուծում-որոշումներ է կայացնում չեզոք դիրքերից: Նման մեխանիզման տեսակետից քաղաքական համակարգը արտացոլման և ոչ թե վերաբերունքի համակարգ է: Բայց արևմտյան քաղաքացիական հասարակությունների փորձն իսկ ցույց է տալիս, որ իշխանություն-

քաղաքացի և իշխանություն-քաղաքացիական ինստիտուտներ փոխհարթերություններում հակաժողովրդավարական բազմաթիվ սողանցքեր կան: Մի կողմից՝ պարբերաբար խախտվում են իշխանության և քաղաքացիների միջև կնքված «համաձայնագրերը», մյուս կողմից՝ մարդկանց շահերը պաշտպանող քաղաքացիական ինստիտուտները աստիճանաբար վերաճում են էլիտար ակումբների և, սեփական շահերից ելելով, հաճախ գործարքի մեջ մտնում իշխանությունների հետ:

Ինքնին հասկանալի է, որ ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության փորձ չունեցող անցումային հասարակությունների քաղաքացիան համակարգերը և իշխանությունները առավել քան կողմնակալ են և հազիվ թե առաջիկայում դեկավարվեն քաղաքացիան ու տնտեսական իշխանությունների տարանջատման սկզբունքով: Առավել ևս, որ տնտեսական միջոցների սահմանափակության պատճառով քաղաքացիան ուժերի պայքարի բացահայտ ու քողարկված խորքերում իշխում է սեփականաշնորհկածի վերասեփականաշնորհման մտայնությունը: Հանգամանք, որ ապակայումացնում է տնտեսական համակարգը և գրեթե լեզիտիմացնում քաղաքացիան ու տնտեսական իշխանությունների փոխչափավետ հովանավորչությունն ու կոռուպցիան:Պերճանենու վերասեփականաշնորհման և դրամից ածանցյալ՝ «իշխանությունը հարստանալու և հաշվեհարդարի միջոց է» քաղաքական գայքակորություններից ձերբագատվելու համար, որպես առաջին քայլ, անհրաժեշտ է.

1. Կամ քաղաքական ու քրեական պատասխանատվության ենթարկել անօրինական ու հովանավորչական միջոցներով սեփականատեր դարձած քաղաքական ու սոցիալական ընտրանուն,

2. Կամ մշակել յուրացրած ֆինանսներն ու այլ կարգի միջոցները հայենական արտադրության մեջ ներդնելու իրավական պարտավորությունների համակարգ և հայտարարել համաներուն:

§ 2. Կարգավորվածության քաղաքական արտադրության և ինդուստրիալ ժողովրդավարություն

Կարգավորվածության «քաղաքական արտադրության» կազմակերպման կարևորագույն նախապայմաններից մեկը սոցիալական արդարության, ինչպես նաև հասարակության պահանջների ու պահանջնունքների նկատմամբ քաղաքական համակարգի ընկալունակությունն է: Այս հանգամանքը առավել կարևոր է դառնում նաև այն պատճառով, որ խորհրդային տարիներին ծևակորված «պետական քաղաքացին», առերևույթ ընդունելով ազատականության սկզբունքներն ու խաղի կամոնները, իրականում իր կյանքի պայմանների բարելավումն ու բարեկեցությունը ակնկալում է իշխանություններից ու պետությունից: Պատահական չե, որ անցնան փուլերում հասարակության կողմից քաղաքական համակարգին և իշխանություններին ներկայացվող սոցիալական պահանջների «նուտքը» խիստ ծանրաբեռնված է, ինչը հատկապես բնորոշ է տնտեսապես քայլաված և աղքատ հասարակություններին: Նման իրավիճակներուն կարևորվում է այն հանգամանքը, թե քաղաքական համակարգը ինչպես է արձագանքում այդ պահանջներին և ինչ լուծումներ է առաջարկում: Եթե այս տեսանկյունից դիտարկենք հայոց պետականության կայացման և քաղաքական համակարգի ու իշխանությունների առջև ծառացած հիմնախնդիրները, ապա քաղաքական համակարգի, որպես ազգային շահերի անվտանգության «սուրբեկտի, կարևոր պարտավորություններից մեկը մարդկանց պահանջնունքների և հավակնությունների ծևավորման պրոցեսի ուղղորդումն է, ինչը նաև ազգի սոցիոմշակութային կերպարի արդիականացման կարևոր նախապայմաններից մեկն է: Որ քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման սկզբունքը անցումային համակարգերում լիովին չի գործում, ակնհայտ փաստ է: Յասկանալի է նաև, որ անգամ քաղաքական կանք դրսառելու դեպքում հնարավոր չէ արմատապես փոխել իրավիճակը: Քաղաքական պայքարի այս տարիների փորձը ցույց է տալիս, որ «սեփականատերի սեփականագրկման» արմատական կոչերը իրատեսական չեն և ավելի շատ պոպուլյատական ու շահադիտական նպատակներ են հետապնդում: Ստեղծված իրավիճակում սոցիալական ծայրահեղ բեռացումը այս կամ այն չափով հաղթա-

հարելու և սոցիալական արդարություն հաստատելու առավել իրատեսական քայլն այն կլինի, որ իշխանությունները փորձեն հասկանալ սոցիալական տարբեր խավերի պահանջնումների ձևավորման առանձնահատկությունները, զարգացման դիմանմիկան և մշակեն դրանց բավարարման առաջնահերթության քաղաքականություն:

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում ստեղծված իրավիճակի առանձնահատկություններից մեկն այն է, որ, օգտվելով քաղաքական ազատությունների և շուկայական հարաբերությունների ընձեռած հնարավորություններից, բարեփոխումների հատկապես առաջին փուլում հասարակության գրեթե բոլոր խավերը դրսեւորում են ավելի շատ հավակնություններ, քան ներում է նրանց տնտեսական, պրոֆեսիոնալ և ինտելեկտուալ հնարավորությունները: Չունենալով անհրաժեշտ փորձ և զգուշելով իշխանություններից հավասար հեռավորության վրա, հասարակության միջին շերտերը մտնում են տնտեսական «արկածախնդրության» դաշտ և, որպես կանոն, ձախողվում իրենց սխալների հատուցումը պահանջելով պետությունից ու իշխանությունից: Ընդ որում, հավակնությունների ու հնարավորությունների անհամապատասխանությունը սոցիալական տարբեր խավեր փորձում են հաղթահարել տարբեր ճանապարհներով: Սոցիալական ընտրանին այն լուծում է քաղաքական իշխանության հետ մերձենալու և փոխահավետ հովանավորչական ծառայությունների միջոցով, իսկ մյուսները հարկադրված համալրում են արմատական ընդդիմության սոցիալական բազան՝ աստիճանաբար համակերպելով նվազագույն պահանջնների ապրելակերպին: Պետք է նկատել, սակայն, որ սոցիալական բներացումը երկրի սոցիալ-տնտեսական վիճակի արտացոլումը չէ միայն: Այն նաև վկայում է, որ քաղաքական ժողովրդավարությունը դեռևս խորհրդանշիչային է և սոցիալապես անպաշտապան մարդկանց մեծամասնության համար առարկայագործ ու դեմագոգիկ իմաստումի: Բանն այն է, որ քաղաքական հավասարություն ձեռք բերած մարդիկ հասկանալի պատճառներով ձգուում են նաև նյութական-փաստական հավասարության: Բայց հարցն այն է, որ հավասար քաղաքական ազատությունից չի բխում մարդկանց նյութական հավասարություն: Տնտեսական կյանքում շուկայական հարաբերությունները տալիս են միայն ինքնահատածան ազատություն, որի համար, սակայն, անհրաժեշտ է քաղաքական ժողովրդավարությունը լրացնել ու ամրապնդել ինդուստրիալ

ժողովրդավարությամբ: Իսկ դա նշանակում է, որ հավասարաչափ կազմակերպված ու համախմբված պետք է լինեն և ձեռներեց-սեփականատերը, և աշխատավոր զանգվածները: Կորպորատիվ շահերը, կլանային համակարգը, քաղաքական հովանավորչությունը և նմանատիպ այլ գործոններ արդեն իսկ այս կամ այն չափով սոցիալ-տնտեսական ընտրանուն դարձնում են կազմակերպված և սեփական շահը գիտակցած կառույց: Ավելին, անպատճելիությունը, հովանավորչությունը, ստվերային տնտեսությունը և նմանատիպ այլ քաղաքականացված միտումներ անցումային հասարակություններում այլևս ոչ թե բարեբեր են, որոնք դեռ հնարավոր է վերացնել համապատասխան քարոզչության միջոցով, այլ պետական համակարգի քաղաքական գործելակերպ, որը միայն քաղաքական մեռողներով և իշխանություն բանեցնելու միջոցով հնարավոր կլինի հաղթահարել:

Անցումային ցանկացած հասարակությանը ներքնապես բնորոշ քաղաքական ու տնտեսական իշխանությունների սերտաճումը հանգեցնում է նրան, որ քաղաքական ու տնտեսական արտոնյալ վերնախավի մոտ անձնական շահը գրեթե նույնացվում է օրենքը շրջանցելու և անօրինական ճանապարհով սեփականություն և հարստություն ստեղծելու ընդունակությանն ու հնարամտությանը: Ի դեպ, ինչպես ցույց են տալիս շուկայական հարաբերությունների ձևավորման գործնթացները, օրենքը շրջանցելու «գաղափարախոսությունը» դառնում է այդ կերպ մտածող մարդկանց տնտեսական հետագա ձեռնարկումների ձախողման պատճառ, քանի որ հայտնվում են նույն գործելակերպից օգտվող ավելի «արտոնյալ» մարդիկ: Իսկ դա նշանակում է, որ տնտեսական հարաբերությունների բնականոն զարգացումը հնարավոր չէ այնքան ժամանակ, քանի դեռ «արտոնյալ վերնախավի» անձնական շահերը դուրս են օրինականության շրջանակներից: Նույնը, սակայն, չի կարելի ասել հասարակության տնտեսապես անպաշտապան մեծամասնության հնարավորությունների մասին, որոնց պահանջների նկատմամբ էլիտար ժողովրդավարությամբ դեկավարվող քաղաքական համակարգերը նաև հետևողական խլություն են դրսեւորում:

Պետականության կայացման կարևոր ցուցանիշներից մեկը սոցիալական պայմանների մարդկայնացվածության աստիճանն է: Ոչ քաղաքական և ոչ էլ տնտեսական համակարգերը չեն կարող օպտիմալ գործա-

նել, եթե հասարակության մեծամասնության բազային պահանջնունքները մշտապես գտնվում են սահմանային անբավարարվածության մակարդակում վերաճելով գոյատևման ամենօրյա պայքարի: Նման իրավիճակներում իշխանությունները «ֆիզիկական տիրապետում» միջոցով կարող են, լավագույն դեպքերում, հաստատել մեխանիկական կայունություն: Մինչդեռ պետականության քաղաքական կազմակերպման անհրաժեշտ պայմանը ազգի բովանդակային տիրապետումն է: Բայց ազգի բովանդակային տիրապետումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե՝

Առաջին քաղաքական համակարգին ներկայացվող պահանջների «նույտի պատուհանը» հավասարապես բաց է սոցիալական տարրեր շահեր և գոյատևման տարրեր խնդիրներ ունեցող խավերի համար: Ավելին, անցումային փուլերում իշխանությունները պարտավոր են որոշ իմաստով կողմնակալ լինել շուկայական պայմաններին դժվար ադապտացվող և մրցունակություն չունեցող անպաշտպան խավերի նկատմամբ: Դասարակության տարրեր խավերի շահերի մեկնաբանումը, դրանց քալանսավորումը, հարկ եղած դեպքում նաև գերակայությունների հստակեցումը պրոֆեսիոնալ քաղաքական գործունեության կարևոր բաղկացուցիչներից մեկն է:

Երկրորդ՝ քաղաքական համակարգը օպտիմալ է, եթե պահանջների ճնշման տակ կատարում է խնդիրներ լուծող քայլեր ու որոշումներ, որոնք նաև հասարակական հնչեղություն ունեն և շոշափում են ազգի ֆիզիկական գոյության ու պետական անվտանգության իհմնահարցերը: Ավելին, անցումային հասարակությունների զարգացման ներկա փուլում քաղաքական համակարգի և իշխանությունների առջև ծառացած խնդիրներից մեկը, որքան էլ պարադոքսալ հնչի, գոյատևման հոգսով ապրող սոցիալական խավերին նյութական և հոգևոր հավակնութ պահանջներ ու պահանջնունքներ «Աներարկելն է»: «Պետականության ու քաղաքական համակարգի կայացման տեսանկյունից խիստ կարևոր է, որ հենց հասարակության մեծամասնությունը կազմող ադրատ ու միջին խավերը դեկավարվեն կյանքի ու ապրելակերպի այնպիսի չափանիշներով, որոնք գերազանցեն պետական համակարգի հնարավորությունները: Առաջընթաց պահանջներն ու պահանջնունքները ոչ միայն ցանկացած հասարակության զարգացման ու կատարելագործման շարժիչ ուժերն են, այլև իշխանության ու քաղաքական ողջ համակարգի նորիլիզացիայի գրավականը:

Ինչ խոսք, շատ ավելի հեշտ է կառավարել նվազագույն պահանջներ ու պահանջնունքներ ունեցող հասարակությանը, բայց երբ հասարակությունը արդեն իսկ տարերայնորեն բաժանված է երկու ծայրահեղ թևերների և կառավարության հերթական բյուջեներոք չունեն սոցիալական հավակնութ ուղղվածություն, մեծանում են հասարակության յումանացման սոցիալական դժգոհությունների նույնքան յումանացված դրսեւունների հնարավորությունները: Առավել ևս, որ տնտեսապես քայլայված անցումային հասարակություններում քաղաքական համակարգին ներկայացված պահանջների մեջ մասն առնչվում են գոյատևման խնդիրներին և այդքանով էլ բնական են ու բանական: Դրանք հիմնականում տեղավորվում են սոցիալական պետության պարտավորությունների կողեքսում (նվազագույն զամբյուղ, աշխատանք, արդարություն, օրինականություն և այլն):

Երրորդ՝ ազգի բովանդակային տիրապետման տեսանկյունից մի կարևոր հանգամանք ևս: Երրորդ հանրապետության ձևավորման առաջին իսկ օրերից հայ ժողովուրդը դրսեւուց «ազգային-պետական» քաղաքացի դառնալու բարձր ինքնագիտակցություն՝ պատրաստ դիմակայելու ոչ միայն արտաքին, այլև ներքին, հաճախ նաև ոչ առարկայական դժվարություններին: Նա պետությանը մասսամբ «ազատել է» իր կենսական խնդիրներով զբաղվելու հոգսից՝ ակնկալելով, որ պետության նվազագույն կենսական երակները կծառայեն համազգային խնդիրներին: Այդ տեսակետից առանձնահատուկ ուշադրության է արժանի իշխանությունների հանդեպ ժողովրդական հանդուրժողականությունը: Սա չէ պատճառն, արդյոք, որ անձնական զիհողությունները սեփական հոգսը համազգային բեռ չդարձնելու ազգային բարոյական որակները զգնահատող քաղաքական իշխանությունները «սոցիալական պետությունը» ընկալում են որպես սոցիալ-տնտեսական ապակենտրոնություն: Մի հանգամանք, որ աստիճանաբար կազմալուծում է ներազգային միասնական կյանքը և անհնարին դարձնում սոցիալական տարրեր խավերի ու շերտերի շահերի ու նպատակների միասնականացումը: Պարադոքսն այն է, որ անձնական կենսագործունեությունը մի կողմից դառնում է ընտանեկան-ազգակցական խնդերի գոյատևման և ինքնարավության միջոց և այդքանով էլ արդարացված է, բայց, մյուս կողմից, խոչընդոտում համազգային շահերի ձևավորմանը և այդքանով էլ այդ խավերին դարձնում իրավագուրկ ու ան-

պաշտպան:

Չորրորդ՝ ազգի բովանդակային տիրապետման առնչությամբ խիստ կարևորում է քաղաքական, հոգևոր և տնտեսական իշխանությունների համագործակցության հիմնահարցը: Բանն այն է, որ քաղաքական համակարգը չմիջամտելով հասարակության հոգևոր արտադրությանը, պարտավոր է նրա հետ համագործակցել, ստեղծել հոգևոր ու աշխարհայացքային դաստիարակության համապատասխան ինստիտուցիոնալ նեխանիզմներ, որպեսզի այդ միջոցներով ազդի մարդկանց պահանջների ու պահանջնունքների ծևավորման վրա՝ դրանք ենթարկի քաղաքական լեգիտիմացնան և համապատասխանեցնի քաղաքական համակարգի նպատակներին: Այդ տեսակետից, օրինակ, Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում քաղաքական լեգիտիմություն չունեն ոչ աղքատ-գործազուրկ խավերի սոցիալական խեղճության հասնող նվազագույն պահանջնունքները, ոչ էլ սոցիալ-քաղաքական ընտրանու մի մասի ապրելակերպը: Երկու դեպքում էլ իշխանությունների ու քաղաքական ողջ համակարգի առջև դրված է իրեն ներկայացված պահանջների ու պահանջնունքների ռացիոնալացման եղանակների ու մեխանիզմների կատարելագործնան խնդիրը:

Խորհրդային համակարգում ցանկացած սոցիալ-տնտեսական պահանջ ու նախաձեռնություն դիտվում էր խռովարարություն: Այդ պատճառով էլ խորհրդային սոցիումը այդպես էլ չնշակեց իշխանություններին պահանջներ ներկայացնելու և հաղորդակցվելու այն լեզուն, որի օգնությամբ հասարակությունը կարողանար հստակ և կոնստրուկտիվ արտահայտել իր պահանջները: Հայտնվելով քաղաքական ազատության մեջ և չունենալով նոր իրողություններին բնորոշ պահանջնունքների մշակույթ, մարդիկ երթեմն դնում են այնպիսի արմատական պահանջներ, որոնց լուծումները քաղաքական իիմնավորում գրեթե չունեն: Ավելին, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ քաղաքական ինչ-ինչ նկատառումներից ելնելով իշխանության համար պայքարող ուժերը հաճախ իրենց խոստումներով հրահրում են արմատական պահանջներ ու պահանջնունքներ, ապա կարելի է ասել, որ քաղաքական համակարգը դեռևս պատրաստ չէ հասարակական կյանքի կայունությունն ու կարգավորվածությունը դարձնել ամենօրյա արտադրություն:

Սոցիալական խոստումների քաղաքականությունը, որին հասարակու-

թյունը այլևս չի հավատում, ներքնապես հակասական է: Էլիտարիզմի սկզբունքներով ղեկավարվող քաղաքական համակարգը մի կողմից փորձում է հասարակությանը պարտադրել քաղաքակրթական-սոցիոնշակութային նոր ապրելակերպ, մյուս կողմից, չստեղծելով համապատասխան պայմաններ՝ պահանջնունքների ծևավորումն ու բավարարումը թողնում է շուկայի ընձեռած հնարավորություններին: Մինչդեռ մարդկանց շահերը հավասարակշռելու և կոնֆլիկտները հաղթահարելու համար ավանդաբար լուրջ ջանքեր գործադրող քաղաքական իշխանության լեգիտիմությունը որոշվում է նրա գործունեության օգտակար գործողության գործակիցով և ոչ թե շուկայով: Առավել ևս, որ մեզանում շուկան չի ղեկավարվում քաղաքական ու սոցիոնշակութային չեզոք չափորոշչներով ու նորմերով: Ասվածից հետևում է, որ արտաքին ու ներքին անվտանգության հիմնախնդիրները լուծելու նպատակով քաղաքական ողջ համակարգը պետք է ղեկավարվի քաղաքակրթական սոցիալ-տնտեսական արժեքների ազգայնացման, սոցիալապես պաշտպանված ինքնարավ տնտեսական հարաբերությունների հաստատման և քաղաքական կառավարման ազգային-ավանդական ծևերի գործադրման սկզբունքով: Սոցիալ-տնտեսական ոլորտում վերոհիշյալ խնդիրը լուծելու և կայունությունն ու կարգավորվածությունը հասարակությանը ներքնապես բնորոշ ամենօրյա արտադրություն դարձնելու համար անհրաժեշտ է, որ

Առաջին՝ իշխանությանը ներկայացված պահանջներն ու պահանջնունքները լինեն բնական ու բանական: Հարցը միայն այն չէ, որ այդ պահանջները համապատասխանեն սոցիալական համակարգի առկա հնարավորություններին: Ինչպես արդեն նշվեց, հայ հասարակության մեծամասնության պահանջներն ու պահանջնունքները խիստ չափավոր են և հիմնականում վերաբերում են առօրյա գոյատևման նվազագույն նյութական պայմանների ապահովմանը: Պրոբլեմն այն է, որ խիստ ցածր է այդ պահանջների **հոգևոր-որակական** ցուցանիշը: Օբյեկտիվ ու սուբյեկտիվ տարրեր պատճառներով մեզանում պահանջնունքները հանգում են այս կամ այն նյութական նվազագույն կարիքի բավարարման ուղղված գործողության: Չի ծևավորվում նույնատիպ պահանջներ ու պահանջնունքներ ունեցող մարդկանց կազմակերպված սոցիալական այն խավը, որը քաղաքական համակարգին կներկայացնի ոչ թե կարիքի բավարարման, այլ՝ շահերի պաշտպանության պահանջ:

Երկրորդ՝ գործեն տարբեր սոցիալական շերտերի պահանջները սոցիալականացնող և դրանք քաղաքական համակարգին ներկայացնող հասարակական ու քաղաքական ինստիտուտները։ Համակարգի օրգանական կայունության ապահովման համար իշխանության և նրա քաղաքացիների միջև միջնորդ օղակի առկայությունը երաշխիք է, որ մարդկանց առօրյա պահանջները չեն վերաճի քաղաքական պահանջների, և իշխանությունները գործ կունենան կազմակերպված հասարակության և ոչ թե ամբոխի հետ։ Հասարակության մեջ մարդկանց տեղն ու դիրքը որոշվում է քաղաքական շուկայում։ Դրա համար, սակայն, անհրաժեշտ է, որ հասարակությունը բաժանված լինի որոշակի շահերով համախմբված խմբերի, որոնք նաև վստահ լինեն, որ իրենց շահերի պաշտպանությունը հանձնված է համապատասխան գաղափարախոսությամբ դեկավարվող քաղաքական ուժերի։ Միայն այս դեպքում քաղաքական ուժի գոյությունն ու պայքարը կդառնա լեզիտիմ։ Եթե այս տեսանկյունից դիտարկենք անցումային հասարակությունների քաղաքական կյանքն ու գործունեությունը, ապա դժվար չէ նկատել, որ նրանցում գործող քաղաքական ուժերը դասական իմաստով լեզիտիմ չեն։ Քանի որ անցումային փուլերում սոցիալական շերտավորումն ու համապատասխան շահերի ծևավորումը երկարատև պրոցես է, այդ պատճառով էլ գրեթե բոլոր քաղաքական ուժերը նախընտրում են խոսել վերացական շահերի ու արժեքների մասին և քաղաքական պայքարը հանգեցնում են Բարու և Չարի իռացիոնալ պայքարի։

Երրորդ՝ կայունության ու կարգավորվածության տեսակետից գիտակցված շահերի շուրջ մարդկանց համախմբվածությունը ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական կազմակերպվածության, զանազան քաղաքական շահարկումներից ձերբազալտելու կարևոր պայման է։ Բան այն է, որ սոցիալական պատկանելիությունն ու շահերը գիտակցած քաղաքացին ներկայացուցչական ժողովրդավարության իր իրավունքները պաշտպանելիս և քաղաքական դաշտում կողմնորոշվելիս կանխատեսելի է և կարելի է կրահել, թե նա որ քաղաքական ուժի գաղափարակիրն ու ընտրազանգվածն է։

Չորրորդ՝ սոցիալապես չկազմակերպված խավերին պաշտպանելով հանդերձ, քաղաքական համակարգը պարտավոր է նաև իր ֆունկցիաներն ու ինստիտուտները համաձայնեցնել «հավակնությունների ուստոպի-

այով» դեկավարվող նոր սերնդի սոցիոնշակութային պահանջնունքներին, նվաճի նոր ծևավորվող սոցիալական խավերի նվիրվածությունը, այն խավերի, որոնց պրոֆեսիոնալ կողմնորոշումները կապված են շուկայական հարաբերությունների և ձեռներեցության հետ։ Այս առնչությամբ Հայաստանում մաքսիմում պահանջնունքներ ունեցող սոցիալական խավերի գործունեության պայմանների օրենսդրական հստակեցումը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական լուրջ խնդիր է, քանի որ գործունեության ու նախաձեռնության պետական պաշտպանվածություն ու աջակցություն չտանալու դեպքում, նրանք այլ երկրներում են այդ պայմանները փնտրում, իրենց հետ «տանելով» նաև կենսամակարդակի ու ապրելակերպի կատարելագործման նախաձեռնությունը՝ դաշտը թողնելով ապրելու նվազագույն խնդիր լուծող պասիվ խավերին։

Յինգերորդ՝ սոցիալական խիստ բևեռացման պայմաններում քաղաքական համակարգի կարևորագույն խնդիրներից մեկն էլ, նոր խավերի հավակնությունների և միջին խավերի առօրյա հոգսի միջև հակասությունների լուծումն է, առանց որի ծայրահեղ այդ գոյավիճակներն ու կենսակերպերը աստիճանաբար դուրս կգան ազգային ինքնության շրջանակներից։

Քաղաքական համակարգի գործունեության արդյունավետությունը, ինչպես արդեն նշվեց, որոշվում է նրան ներկայացրած պահանջների որակական ու քանակական ցուցանիշներով և այդ պահանջների հանդեպ իշխանության ընկալունակությամբ ու լուծումների օպերատիվությամբ։ Բայց քաղաքական համակարգի կայացման, հետևաբար նաև ազգի քաղաքական կազմակերպվածության աստիճանը որոշվում է նաև «աջակցության մուտքի» բովանդակությամբ։ Քաղաքական համակարգը երկրի առջև ծառացած խնդիրները կարող է արդյունավետ լուծել միայն այն դեպքում, եթե հասարակությունը սահմանված կարգով պետությանը տրամադրում է անհրաժեշտ նյութական միջոցներ։ Ավելին, համակարգի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև հանրության կողմից իշխանություններին ցուցաբերած քաղաքական ու բարոյական աջակցության աստիճանով։ «Աջակցության մուտքի» արդյունավետությունը մեծապես պայմանավորված է քաղաքացիների արժեքային ու գաղափարական կողմնորոշումների մոտիվացիոն համակարգի բովանդակությունից։ Ընդ որում, հարկ է նկատել, որ իշխանությունների գործու-

նեռլիքան հանդեպ ցուցաբերված աջակցությունը միաժամանակ արտացոլում է պետական համակարգին մարդկանց քաղաքականապես ենթարկվելու շարժառիթները: Աջակցելու շարժառիթները կարող են լինել արժեքային, նյութական և ստիպողական: Այդ տեսակետից, օրինակ անկախ պետականության ձևավորման առաջին փուլում հայ հասարակության գրեթե բոլեր խավերը իշխանության ծեռնարկումներին գրեթե համազգային աջակցություն ցուցաբերեցին ոչ թե այն պատճառով, որ հարկադրված էին կամ շահադիտական ինչ-ինչ ակնկալիքներ ունեին, այլ այն պատճառով, որ կիսում էին առաջադրված հոգևոր-գաղափարական արժեքները /անկախություն, ազգային արժեքներ, ազատություն և այլն/:

Քաղաքական համակարգին ցուցաբերված նյութական ու քաղաքական ամեն մի աջակցություն կարող է դառնալ ամենօրյա վերարտադրություն, եթե այն դառնում է հասարակականորեն օգտակար քաղաքական որոշում: Բայց, ինչպես ցույց է տալիս փորձը, քաղաքական ու տնտեսական իշխանությունների «փոխահավետ համագործակցության» պարագայում, քաղաքական որոշումների կայացնան վրա «ճնշման խմբերի» ազդեցությունը, որպես կանոն, կողմնակալ է և չի արտահայտում տնտեսապես անպաշտպան խավերի շահերը: Որոշումներ կայացնելու ինստիտուցիոնալ կառուցվածքը և այդ որոշումների կատարումը հայտնվում է խոշոր բիզնեսի և այլ սոցիալական ուժերի ազդեցության տակ, ինչի հատևանքով քաղաքական համակարգի «աջակցության մուտքի» գինը չի համապատասխանում որոշումների գմին: Դասարակությունը վճարում է ավելին, քան ստանում է: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ մեզանում քաղաքացիական խնատիտուտները, որպես հասարակության առավել թույլ կազմակերպված խավերի «ճնշման խմբեր», գրեթե չեն գործառնում, ապա կարելի է ասել, որ հասարակության մեծամասնությունը քաղաքական համակարգին ցուցաբերած աջակցությանը համարժեք ազդեցություն չունի քաղաքական կուրսի վրա:

Դավանաբար դա բնորոշ է բոլոր անցումային հասարակություններին: Մի քան ակնհայտ է, որ մեզանում քաղաքական համակարգին ցուցաբերած աջակցությունը /հարկերի ու կոմունալ ծախսերի վճարում, գինվորական ծառայություն, օրինականության պահպանում, ընտրություններին մասնակցություն և այլն/ և պատասխան գործողությունները /սոցիալական ապահովություն, օրենքի առաջ բոլորի հավասարության ապահո-

վում, կենսաթոշակմերի բարձրացում և այլն/ չեն համընկնում: Ի լրումն այդ ամենի, հասարակական գիտակցության մեջ իշխում է այն համոզմումքը, թե սոցիալ-քաղաքական ընտրանին իր հնարավորություններից պակաս աջակցություն ցուցաբերելով պետական համակարգին /եկամուտների կեղծում, գինվորական ծառայությունից խուսափում և այլն/, գործում և ապրում է արտոնյալ պայմաններում:

Քաղաքական ու քաղաքացիական փոխարքությունների փոխադարձ կողմնորոշվածության և հասարակության կենսական եռանդը կառուցողական հումի մեջ դնելու նախապայմանը սոցիալական արդարությունն է: Ազատության և արդարության համամասնության խախտման դեպքում, երբ անցումային շրջանի արտակարգ իրավիճակը նաև դաշնում է քաղաքական շահարկումների և ծախողումների արդարացման միջոց, հասարակության մի մեծ հատված գրկվում է նյութական ու հոգևոր կյանքի պայմանների վերարտադրության հնարավորություններից և ձևավորում քաղաքական համակարգի հետ հարաբերվելու քաղաքական ու բարոյական նոր հիմունքներ՝ չմասնակցելու քաղաքականություն և չմասնակցելու բարոյականություն:

Երկրի սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական կյանքը միշտ էլ ենթակա է ազգի առջև ծառացած խնդիրների տրամաբանությանը: Այսօր այդ խնդիրների արդյունավետ լուծումը ենթադրում է կենցաղային զսպահություն, զոհողություն, միաբանություն և, որ ամենակարևորն է, պետական կազմակերպվածություն: Ոչինչ այնպես չի կարող կազմալուծել ու պայքանավորացնել ներազգային կյանքը, ինչպես համատարած զսպահության ու զոհողությունների պայմաններում առանձին խավերի ու շերտերի արտոնյալ կարգավիճակը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Քաղաքական եվ օրենսդիր
իշխանությունների
տարանջատման սկզբունքը

**§ 1. Անցումային հասարակության
քաղաքական համակարգի ծևավորման
առանձնահատկությունները**

Ժողովրդավարությունը ոչ միայն մեծամասնության իշխանություն է, այլև մեծամասնության կամքի սահմանադրորեն ճշտված ռեժիմ: Իսկ դա նշանակում է, որ քաղաքական համակարգն ու քաղաքական ռեժիմը պետք է լինեն և ժողովրդավարական և սահմանադրական: Բանն այն է, որ հատկապես անցումային հասարակություններում մեծամասնության իշխանության և սահմանադրական կարգի միջև հաճախ ծագում են որոշ հակասություններ, ինչի հետևանքով քաղաքական համակարգի գործունեությունը կարող է դուրս գալ սահմանադրական վերահսկողության շրջանակներից:

Քաղաքական համակարգի գործունեությունը բնութագրվում է երկու, հաճախ իրարամերժ, չափանիշներով՝ լեգիտիմությամբ և արդյունավետությամբ: Ընդ որում, քաղաքական համակարգի օրենսդիր թևի գործունեության հիմնական չափանիշը լեգիտիմությունն է, իսկ գործադիր թևինը՝ արդյունավետությունը: Սակայն, ինչպես ցույց է տալիս փոխակերպվող հասարակությունների քաղաքական կյանքի փորձը, վերոհիշյալ սկզբունքների միջև հաճախ ծագում են հակասություններ ու տարածայնություններ, քանի որ իշխանության լեգիտիմության չափորոշիչներով դեկավագելու դեպքում միշտ չէ, որ հնարավոր է գտնել իրադրային իրատապ խնդիրների արդյունավետ լուծման օպտիմալ եղանակը: Նման իրավիճակներում և օրենսդիր և գործադիր իշխանությունները դրսևորում են սահմանադրական կարգը խախտելու պերճանենտ հակվածություններ: Դրա պատճառն այն է, որ սոցիալ-տնտեսական տրանսֆորմացիաների փուլը հասարակության մեծամասնությունը ընկալում և գնահատում է քաղաքական համակարգի գործողությունների նպատակահարմա-

րության տեսանկյունից, իսկ քաղաքական էլիտար փոքրամասնությունը՝ անհրաժեշտության: Ուշագրավ է, որ տարաբնույթ այդ մեկնաբանությունը անցումային հասարակությանը բնորոշ այնպիսի երևույթ է, որն արտահայտում է քաղաքական համակարգի օրենսդիր և գործադիր թևերի գործառության տարբերությունները: Գործադիր իշխանությունը, որպես կանոն, առաջնորդվում է տնտեսական նպատակահարմարության օրինաչափություններով և կամա թե ակամա դեկավարվում փոքրամասնություն կազմող սոցիալական ընտրանու շահերով, իսկ օրենսդիր իշխանությունը, որպես ներկայացուցչական ժողովրդավարության կրող, հաճախ դեկավարվում է մեծամասնության պատկերացումներով ու տրամաբանությամբ: Այս հակասության պատճառով է, որ տրամսֆորմացիոն հասարակություններում պարբերաբար ծագում են «օրենսդիր» ու «գործադիր» ճգնաժամներ:

Այն հանգամանքը, որ անցումային հասարակություններում ինստիտուցիոնալ-իրավական մեխանիզմները արդյունավետ չեն գործում և քաղաքական համակարգերում մեծանում է անձնական կախվածության հարաբերություններ հաստատելու վտանգը, առանձնահատուկ հնչեղություն է հաղորդում քաղաքական համակարգի լեգիտիմության և գործադիր իշխանության անկախության հիմնահարցերին: Իսկ դա նշանակում է, որ քաղաքական և տնտեսական իշխանությունների սերտաճման, անցումային շրջաններին բնորոշ հեղափոխական ռունանտիզմի և իշխանության մոնոպոլացման միտումների պարագայում սահմանադրական կարգը քաղաքական համակարգի նկատմամբ պետք է դեկավարվի «անվատական կանխավարկածի» սկզբունքով: Յետխորհրդային հասարակություններում այդ սկզբունքը առավել է կարևորվում նաև այն պատճառով, որ առաջին քաղաքական նոր ընտրանին դեռևս չի ձերբագատվել խորհրդային քաղաքականության արժեքային հիմունքներից, ըստ որի «քարի նպատակներով» սահմանադրական կարգի շրջանցումը չի խախտում պետական որոշումների լեգիտիմությունը, երկրորդ՝ պահպանվել է նախորդ համակարգի դեմ պայքարի /հեղափոխական իրավիճակներին բնորոշ և հաճախ արդարացված/ քաղաքական ոչ լեգիտիմ գործողությունների հներցիան, երրորդ՝ իշխում է «սահմանային իրավիճակներում» քաղաքական ընտրանու արտակար լիազորությունների և «պրագմատիկ արկածախնդրություն» գործելաոճը, չորրորդ՝ սոցիալ-տնտեսական ու քա-

դաքական կորպորատիվ շահերը ներկայացվում են որպես համագօգային շահեր և այլն:

Վերոհիշյալ միտումները վկայում են, որ անցումային փուլերում գործում են քաղաքական համակարգի ձևավորման ու գործառնության որոշ օրինաչափություններ, որոնք նաև կանխորոշում են օրենսդիր և գործադիր իշխանությունների վարքն ու փոխհարաբերությունների բնույթը:

Այդ օրինաչափություններից մեկը իշխող փոքրամասնության արտոնյալ համակարգի ստեղծումն է: Դա հասարակության քաղաքական կազմակերպման առանձնահատուկ եղանակն է, որի հիմքում ընկած է էլիտարիզմի սկզբունքը: Սկզբունքը, որի կիրառական ժանրաբեռնվածությունը մեծանում է սոցիալական համակարգերի անցումային փուլերում: Բանայն է, որ ճգնաժամային հասարակություններում ծագում է համակարգի օպտիմալացման ու մոդեռնիզացման քաղաքականության անհրաժեշտություն, որի նախաձեռնողն ու իրագործողը, որպես կանոն, քաղաքական պատասխանատվություն ստանձող «գիտակից ու կազմակերպված փոքրամասնությունն» է: Տրամաբանական է նաև, որ ճգնաժամային իրավիճակներում «կազմակերպված փոքրամասնության» քաղաքական իշխանությունը ենթադրում է ժողովրդավարության որոշ սահմանափակումներ և սոցիոնշակությային պարտադրանքներ, քանի որ հասարակության առջև ծառացած պետականության վերականգնման, համակարգի մոդեռնիզացման և ներհամակարգային սոցիալ-տնտեսական որոշակիության հաստատման խնդիրները պահանջում են քաղաքական կանք և վճռականություն: Կազմակերպված ու գիտակից քաղաքական փոքրամասնության իշխանությունը ամբոխացված հասարակության օրգանական համախմբվածության վերականգնման հարցում կարող է նպաստավոր ազդեցություն ունենալ:

Պարզապես անհրաժեշտ է, որ քաղաքական էլիտան իր ինտելեկտուալ ու բարոյական որակներով գերազանցի պասիվ մեծամասնությանը և կողմնորոշված լինի դեպի ազգային շահը: Նկատենք նաև, որ նման իրավիճակներում կարևոր է ոչ միայն էլիտայի արժեքային ու բարոյական որակը, այլև փոխակերպման ենթարկվող հասարակության սոցիալական որակը /սոցիոնշակությային դիմանկարը/:

Անցումային փուլերում սահմանադրական կարգից շեղվելու քաղաքական էլիտայի պերմանենտ հակվածությունը և որոշ իմաստով նաև պար-

տադրվածությունը ծայրահեղ դրսևորումներից ապահովագրելու համար անհրաժեշտ է, որ հասարակության սոցիալական դիմանկարում իշխեն շուկայական հարաբերություններին բնորոշ որակներ՝ գործնականություն, սառնասրտություն, նախաձեռնություն, ձեռներեցություն, օրինականություն և այլն: Վտանգն այն է, որ նշված որակների բացակայության պարագայում քաղաքական էլիտան կարող է գործել անհրաժեշտ հակագողող և զսպող սոցիոնշակությային հսկողությունից անկախ: Նման դեպքերում քաղաքական ընտրանին, մի կողմից, փորձում է բարեփոխումներն անցկացնել իր պատկերացումներին ու քաղաքական համոզնումներին համապատասխան, մյուս կողմից՝ ըստ կորպորատիվ շահի: Նկատենք նաև, որ երկու դեպքում էլ իշխող փոքրամասնության արտոնյալ համակարգը իր գործելակերպը արդարացնելիս ելնում է հետևյալ հիմնավորումներից:

- սոցիալական ծանր վիճակում հայտնված «պահպանողական մեծամասնությունը» անցումային փուլում չի կարող օբյեկտիվ գնահատել տեղի ունեցող գործընթացների պատմական նշանակությունը և չի կարող քաղաքական ճիշտ ընտրություն կատարել,

- իրենց ծրագրերը սոցիալական հարցերով ծանրաբեռնած և մշտապես ժողովողի համակրանքին արժանանալու խնդիր ունեցող քաղաքական ընդդիմադիր ուժերը անկարող են գլխավորել ու առաջ մղել բարեփոխումների գործընթացը,

- անցումային փուլերում քաղաքական ուժերի տարբերակումը, և նրանց միջև գաղափարական ու քաղաքական տարբերությունները պայմանական բնույթ ունեն,

- անցումային հասարակություններում բարեփոխումներ իրագործելու համար անհրաժեշտ է հենվել քաղաքական պատասխանատվություն ստանձող և ժողովողի դգնիությունները հաշվի չառնող հասարակության «գիտակից ու կազմակերպված» ընտրանու վրա:

Փոխակերպվող հասարակություններին բնորոշ քաղաքական զարգացումների մյուս առանձնահատկությունը իշխանության մենաշնորհման ճանապարհով իրադարձություններին արագ արձագանքող քաղաքական իշխանության կենտրոնացված համակարգի ձևավորումն է: Ներկայացուցական ժողովրդավարությանը ոչ միշտ բնորոշ այս երևույթը ունի առարկայական որոշ հիմքեր: Գաղափարական ու քաղաքական մեկ հա-

մակարգից մյուսին անցման առաջին շրջանում հատկապես ընդդիմադիր քաղաքական ուժերը հակված են երկրում ընթացող գործընթացները չափից ավելի գաղափարականացնել: Մինչդեռ սահմանային իրավիճակներում գործող պետական կառույցը պետք է ունենա որոշումներ կայացնելու ճկուն համակարգ: Դժվար չէ պատկերացնել, թե դեռևս լիովին չկայացած քաղաքական ուժերի պարագայում կառավարման պառաւմնտական համակարգը մեզանում ինչ արդյունավետությամբ կարող էր քաղաքական որոշումներ կայացնել: Այդ առօւմով նախազարդական համակարգը անցումային փուլերում կառավարման առավել արդյունավետ եղանակ է: Բայց իշխանության կենտրոնացված համակարգը արդյունավետ կարող է գործել այնքան ժամանակ, քանի դեռ ունի քաղաքական կայուն հենարան, որը հարկ եղած դեպքում կարող է նաև սահմանադրական կարգը շրջանցող կամ յուրովի մեկնաբանող օրենսդրական որոշումներ կայացնել:

Հետխորհրդային երկրների քաղաքական գարգացումները ցույց են տալիս, որ անցումային խնդիրներ լուծող հասարակություններում քաղաքական դաշտի և իշխանության քաղաքական հենարանի ձևավորման գործընթացներն ընթանում են այլ «օրինաչափություններով»: Մասնավորապես, հայտնի է, որ գաղափարապես կազմակերպված քաղաքական կուսակցությունները, որպես կանոն, պահպանողական գործելակերպ ունեն, մինչդեռ համակարգային փոխակերպումների շրջանում իշխանությունը գաղափարապես «մորթիլ» քաղաքական հենարանի կարիք ունի, քանի որ «ռիսկային հասարակություններում» ազգային կյանքի ներքին կազմակերպվածությունը, արտաքին ու ներքին հնարավոր և իրական վտանգները զգալու և կանխելու համակարգային ընկալունակությունը, ինչպես նաև իրադարձություններին արձագանքելու արագությունը պետք է բարձր լինի: Սրանք իրողություններ են, որոնք հաճախ հակասում են քաղաքական ու օրենսդրական իշխանությունների տարանջատման դասական սկզբունքին: Նախապատվությունը տալով որոշումների արդյունավետությանը և ոչ թե գործողությունների լեգիտիմությանը, անցումային շրջանի իշխող քաղաքական ընտրանին հակված է քաղաքական դաշտի և քաղաքական հուսալի հենարանի ձևավորման նոր տեխնոլոգիաների փորձարկմանը, որի օգնությամբ «անսպասելիորեն» ձևավորվում է օրենսդրական մարմնում մեծամասնություն կազմող «իշխանության կու-

սակցություն»: Նկատենք, որ այդ ճանապարհով ոչ միայն լուծվում է իշխող փոքրամասնության քաղաքական հենարանի, այլև քաղաքական գործունեության արդյունավետության և լեգիտիմության համատեղման անհրաժեշտության հարցը: Անցումային շրջանի հատկապես առաջին փուլում քաղաքական և օրենսդրի իշխանությունների փոխհարաբերությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ ներկայացուցչական օրենսդրի իշխանությունը իր իշխանամետ ու ընդդիմադիր թևերով պարբերաբար հակադրվում է գործադիր իշխանությանը: Այդ իսկ պատճառով էլ անցումային որոշ երկրներում /Ռուսաստան, Հայաստան և այլն/ իշխող քաղաքական վերնախավը ակտիվ միջամտում և բացահայտ ու քողարկված միջոցներով փորձում է նպաստել հուսալի ու կանխատեսելի օրենսդրական որոշումներ կայացնող պառաւմնենտական մեծամասնության ձևավորմանը:

Իշխանության մենաշնորհման ճանապարհով կենտրոնացված և «իշխանության կուսակցության» օգնությամբ որոշումների լեգիտիմությունը ապահովող կառավարման համակարգը հստակ պատասխան է տալիս նաև այն հարցին, թե ժողովրդավարական պետության մեջ ու՞մ է պատկանում իշխանությունը: Ընդունելի չէ այն տարածված տեսակետը, թե քաղաքական ինստիտուտների ու հաստատությունների թիկունքում գործուն են չքացահայտված խորհրդավոր ուժեր, որոնք ել հենց կանխորշում են այդ ինստիտուտների գործունեության ուղղվածությունը: Այդ «խորհրդավոր» ուժը հենց իշխող ընտրանին է, որին կարելի է բնութագրել որպես իրադրային դասակարգ:

Հաշվի առնելով քաղաքական և օրենսդրի իշխանությունների գործունեության գնահատման տարրեր չափորոշիչների առկայությունը /արդյունավետություն և լեգիտիմություն/, կարելի է ասել, որ փոխակերպվող հասարակություններին բնորոշ մյուս քաղաքական օրինաչափությունը իշխանության տարրեր թևերի միջև պարբերաբար կրկնվող ինստիտուցիոնալ տարածայնություններն ու հակասություններն են: Ուշագրավ է, որ քաղաքական ու գաղափարական պայքարի հիմնական թիրախը գործադիր իշխանությունն է: Այդ գրեթե օրինաչափ հանգամանքը վկայում է, որ իշխանության մենաշնորհման պարագայում գործադիր իշխանությանը վերագրված է երկակի գործառույթներ: Մի կողմից՝ պետական ցածր կարգապահության, հովանավորչական ու կլանային համակարգերի ակտիվ

գործունեության պայմաններում գործադիր իշխանությունը վաղ թե ուշ դառնում է քաղաքական համակարգի ամենախոցելի օղակը, մյուս կողմից՝ տնտեսական բարեփոխումների պայմաններում այն դառնում է իշխող քաղաքական ուժերի անիրազործելի ծրագրերի ձախողման պատասխանատվության թիրախ։ Պատահական չէ, որ թե Դայաստանում, և թե հետխորհրդային մյուս հանրապետություններում կառավարություններն ու նրանց նախագահները հաճախակի փոխվում են։ Ինստիտուցիոնալ այս երկվության շրջանակներում գործադիր իշխանության ձևավորման հարցում կարելի է առանձնացնել երկու մոտեցում։ Առաջին՝ խորհրդարանում մեծամասնություն կազմող ուժը ստանձնում է երկորի զարգացման քաղաքական պատասխանատվությունը և իր սոցիալ-տնտեսական ծրագրերի գործադրմամբ գաղափարականացնում տնտեսությունը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով։ Երկրորդ՝ խորհրդարանում մեծամասնություն կազմող քաղաքական ուժերը պաշտպանում են ապագահափառականացված տնտեսության մոդելը և կազմում պրոֆեսիոնալների կառավարություն։

Միանգամից նկատենք, որ քաղաքական նոր համակարգի ձևավորման պայմաններում, երբ ընթանում է նաև «կյանքի ու նահվան» գաղափարական սուր պայքար և սկսած բարեփոխումների հաջողության երաշխիքներ չկան, գործադիր իշխանության ձևավորման վերոհիշյալ տարրերակները իշխող ընտրանու համար քաղաքականացնեն նպատակահարմար չեն։ Առաջին դեպքում գործադիր իշխանությունը կարող է դառնալ չափից ավելի քաղաքական լիազորություններ ունեցող մարմին, երկրորդ դեպքում կմեծանա տարբեր կորպորատիվ շահեր ունեցող խնբերի ազդեցության հավանականությունն ու հնարավորությունը։

Դայաստանի քաղաքական համակարգի ձևավորման սկզբնական շրջանում, երբ իշխանության բուրգի լիազորությունները դեռևս ճշգրտված չեն, գործադիր իշխանությունը մի կարծ ժամանակահատված քաղաքական մարմին էր։ Բայց քաղաքական համակարգի գործառույթների ճշգրտմանը գուգահեռ, գործադիր և օրենսդիր մարմինների միջև ծագեցին ինստիտուցիոնալ հակասություններ, քանի որ քաղաքական պատասխանատվություն ունեցող կառավարությունը ցանկանում էր նույն չափով ընդլայնել իր լիազորությունները։ Ըստ եւրյան դա վարչապետական հանրապետություն ստեղծելու փորձ էր, որն ընդունելի չէր օրենսդիր

իշխանության համար։ Պատահական չէ, որ այն օրերի խորհրդարանը ոչ միայն մերժեց ըստ էության վարչապետական հանրապետություն ստեղծելու գործադիր իշխանության պահանջը, և ոչ միայն չամրագրեց վարչապետի քաղաքական կարգավիճակը, այլև հիմնադրեց, այսպես կոչված, «նվազագույն քաղաքական հավակնություններով վարչապետի» ինստիտուտ, ինչը հետագայում լիովին վավերացրեց նաև կառավարման նախագահական համակարգը։

Անցումային շրջաններում ապաքաղաքականացված գործադիր իշխանության մոդելը ունի և առավելություններ, և թերություններ։ Չնտելով մանրամասների մեջ, նկատենք միայն, որ այդ մոդելը բացառում է երկիշխանությունը և այդքանով էլ դրական է։ Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, այս դեպքում երկիշխանությունը պահպանվում է քաղաքական դաշտում, և «իշխանության կուսակցություն» դառնալու համար պայքարը վերածում է գործադիր լծակներ ստանալու և դրանցից օգտվելու պայքարի, առավել ևս, որ նվազագույն քաղաքական հավակնության գործադիր իշխանությունը «ազատված» է քաղաքական պատասխանատվությունից։ Պատահական չէ, որ մինչև այսօր կառավարության գործունեության արդյունքների համար որևէ քաղաքական ուժ դեռևս քաղաքական պատասխանատվության չի ենթարկվել։

Փոխակերպվող հասարակությունների քաղաքական համակարգի ձևավորման մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ նվազագույն քաղաքական հավակնություններ ունեցող գործադիր իշխանության գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է գաղափարական ու քաղաքական նախընտրանքներ չունեցող պետական բյուրոկրատական ապարատի գոյությամբ, որը նաև պետք է երաշխիքներ ունենա, որ իշխանափոխությունները չեն անդրադառնա իր կարգավիճակի վրա։

Ցանկացած քաղաքական համակարգ ունի իրականության և իրադարձությունների ընկալման արժեքային կողեքս՝ պրոբլեմային դաշտ։ Եթե քաղաքական այս կամ այն որոշումը, որքան էլ այն ռացիոնալ լինի, հակասում է համակարգի արժեքային կողեքսին, համակարգը այն մերժում է։ Այդ ինաստով ինստիտուցիոնալ տարածայնությունների պարագայում պետական բյուրոկրատական ապարատը հայտնվում է, այսպես կոչված, «լարվածության դաշտում», քանի որ, մի կողմից պարտավորված է գոր-

ծել իր իրավասությունների շրջանակներում առկա պրոբլեմների լուծման տրամաբանությանը հաճապատասխան, մյուս կողմից նա չի կարող անտեսել քաղաքական համակարգի արժեքային կողեքսի պահանջները: Այդ իմաստով գաղափարական ու քաղաքական նախընտրանքներ չունեցող բյուրոկրատական ապարատի գործունեության ռացիոնալությունը միշտ էլ սահմանային ռացիոնալություն է: Իսկ դա նշանակում է, որ իշխող քաղաքական համակարգի նկատմամբ բյուրոկրատական պարատի չեզորության և ոչ ստանդարտ պրոբլեմներին արագ արձագանքելու կարողության միջև ծագում են որոշակի հակասություններ ու անհամապատասխանություններ: Համակարգը մերժում է այն պաշտոնյային, որը չի դեկավարվում ընդունված արժեքային կողեքսով: Փորձը ցույց է տալիս, որ իշխանության տարանջատման սկզբունքի հոչակումը պետական ապարատի գործունեության ռացիոնալացման համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Քաղաքական պրոցեսների օլիգարխացման և իշխանության մենաշնորհման պայմաններում իշխանական հարաբերությունները դեկավարվում են ու կարգավորվում գաղափարական ու քաղաքական նպատակահարմարության սկզբունքներով:

Կառավարման ապարատի ռացիոնալ գործունեության համար անհրաժեշտ է, որ պաշտոնյան լինի ազատ և ենթարկվի միայն ծառայողական պահանջներին, ունենա ծառայողական հստակ աստիճանակարգ, կարողանա հստակ գուշակել իր ծառայողական կարիերան և այլն: Մինչդեռ ավանդական ու խարիզմատիկ քաղաքական համակարգերում աղմինիստրատիվ ապարատը մշտապես կախված է պետական համակարգում իշխող «արժեքային կողեքսին» հավատարին լինել-չլինելու հանգամանքից: Փորձը ցույց է տալիս, որ անցումային հասարակությունների քաղաքական ու կառավարման համակարգերում քաղաքական իշխանության և պետական բյուրոկրատական ապարատի միջև հաճախ ընթանում է չհայտարարված ներիշխանական պայքար: Չունենալով հստակ կարգավիճակ և ստիպված գործելով ընդունված «արժեքային կողեքսի» շրջանակներում, բյուրոկրատական ապարատը, ըստ անհրաժեշտության, հեշտությամբ կերպարանափոխվելով և արագ համակերպվելով փոփոխվող քաղաքական իրավիճակներին, շահարկելով նաև քաղաքական և գործադիր իշխանությունների ինստիտուցիոնալ հակասությունները, դառնում է «ժամանակավորապես կառավարող» միակ իրական ուժը:

Անցումային փուլերում քաղաքական համակարգի գործունության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ իշխանության քաղաքական հենարանի և պետական բյուրոկրատական ապարատի ձևավորման հիմքում ընկած է յուրահատուկ «արժեքային կողեքս», ինչի հետևանքով քաղաքական նոր համակարգի ձևավորման հատկապես սկզբնական փուլում հասարակության ոչ լեզիտիմ շեշտավորման սկզբունքի տեխնոլոգիան կիրառվում է նաև քաղաքական կյանքում: Ըստ էության, տեղի է ունենում քաղաքական ոչ լեզիտիմ շերտավորում և քաղաքական դաշտի ոչ լեզիտիմ ձևավորում, ինչը անհուսալի է դարձնում ողջ քաղաքական համակարգը: Փորձը ցույց է տալիս, որ գաղափարական ու քաղաքական հենքի վրա չձևավորված, բայց իշխանության քաղաքական հենարանի գործառույթ կատարող ուժերը «հանգամանքների փոփոխության» պատճառով ու առիթով կարող են ենթարկվել գաղափարական «անսպասելի» կերպարանափոխնան: Այդ երևույթը ցույց է տալիս, որ քաղաքական իրադրության փոփոխնան դեպքում քաղաքական ողջ համակարգի և նրա միջուկը կազմող իշխանության ներքին դիմադրողականությունն ու հուսալիությունը մեծապես պայմանավորված է անձնական ու կլանային շահերով: Այդ իսկ պատճառով էլ անցումային հասարակություններում քաղաքական պատասխանատվություն ստանձած «գիտակից ու կազմակերպված փոքրամասնությունը» չունի միասնական գաղափարական հիմք և վաղ թե ուշ կարող է վերածվել քաղաքական օլիգարխիայի իրեն բնորոշ ներքին հակասություններով ու խարդավանքներով: Արդյունքում, որպես կանոն, քաղաքական ու իշխանական համակարգերի առանձին օղակների միջև կապն ու համագործակցությունը ենթարկվում է ոչ այնքան գաղափարական ու ֆունկցիոնալ կախվածության, որքան իշխանության ներկայացուցիչների միջև հաստատված անձնական կախվածության հարաբերությունների տրամաբանությանը:

Տրամաբանագիոն հասարակությունների քաղաքական էլիտան իշխանության դերի ու նպատակների մասին ստեղծում է այնպիսի պատկերացումներ ու սկզբունքներ, որ այդ համակարգի մեջ ներառվող գաղափարական ու քաղաքական ընդդիմախոս գործիչն անգամ արագորեն ենթարկվում է քաղաքական ու գաղափարական ինքնության տրամաբանագիոյի: Նման մեկնարկային գործելակերպի դեպքում համակարգի քաղաքական զարգացումների ուղղվածությունը շատ հաճախ որոշվում է ոչ թե

այս կամ այն կուսակցության կամ քաղաքական միավորման հիմնադրույթների համաձայն, այլ իշխանության ծանրակշիռ լծակ ունեցող որևէ գործի կողմից: Տեղի է ունենում անցումային հասարակություններին բնորոշ մի երևոյթ, երբ որոշ դեպքերում ոչ թե քաղաքական կուսակցություններն են ձևավորում ու առաջադրում քաղաքական և, առավել ևս, պետական գործիչներ, այլ հակառակը: Եթե մի կողմ թողնենք «գաղափարական կերպարանափոխման» բարոյական տեսանկյունը, ապա պետք է ընդունել, որ գաղափարական ու քաղաքական ինքնությունից զանգվածաբար հրաժարվելու երևոյթն ընդամենը վկայում է, որ երկար ժամանակ իշխանության լծակներ ունեցող գործիչներից շատերը ընդունում ու համակերպում են գործող համակարգի քաղաքական զարգացումների ներքին տրամարանությանը: Իսկ այդ տրամաբանությունը երկիմաստ է: Անցումային փուլերում իշխանությունը հասարակությանը ներկայանում է որպես ազգային անվտանգության ու շահերի պաշտպան, գործելով, սակայն, «գիտակից ու կազմակերպված փոքրամասնության» շահերի տրամաբանությամբ: Մի բան ակնհայտ է: քաղաքական ու գաղափարական ինքնության կերպարանափոխման փաստն ինքնին վկայում է, որ անցումային հասարակությունների քաղաքական համակարգի գաղափարական դիմադրողականությունը խիստ ցածր է:

Անցումային հասարակությունների քաղաքական համակարգին բնորոշ վերոհիշյալ երևոյթը վկայում է, որ կոռուպցիան միայն տնտեսական դրսևորումներ չունի: Այս առնչությամբ գերմանացի հայտնի սոցիոլոգ Վեբերը նկատում է, որ ռացիոնալ պետական ծառայողը, որպես կառավարման ֆունկցիոնալ էլեմենտ, ռացիոնալ իշխանության ատրիբուտ է, և քանի դեռ քաղաքական համակարգը դեկավում է արժեքային ինչ-ինչ կողեքսով, ամեն հերթական իշխանափոխությունից հետո, եթե անգամ ընդունվել է պետական ծառայողի մասին օրենք, այդ համակարգը հայտնվում է ճգնաժամի մեջ և ենթարկվում արմատական կադրային փոփոխության: Քաղաքական կոռուպցիան նվազագույնի հասցնելու մյուս պայմանն էլ այն է, որ ֆունկցիոնալ հստակություն մտցվի պետական ծառայողների և կուսակցական դեկավարների գործունեության միջև: Ինքնին հասկանալի է, որ կուսակցական ֆունկցիոները քաղաքական գործիչ է և ցանկանալու դեպքում անգամ չի կարող գործել որպես անկողմնակալ ու քաղաքական ճնշումներից ազատ պետական ծառայող:

Ելիտար ժողովրդավարության սկզբունքներով ձևավորված հետխորհրդային տրամաբորմացիոն հասարակությունների քաղաքական համակարգի գործունեության նյոււ առանձնահատկությունն էլ այն է, որ իշխանությունը դժվարություններ ունի գաղափարական ինքնահաստատման հարցում: Յաշվի առնելով գաղափարական գերիշխանության հաստատման անհնարինությունը, առավել ևս, որ հասարակության «պահպանողական մեծամասնության» համար լիբերալ բարեփոխումներն ընկալվում են որպես տնտեսական կյանքի կազմալուծման հիմնական պատճառ, շրջանառության մեջ է դրվում ապակենտրոն ու ապագաղափարականացված հասարակության համակարգը:

§ 2. Անցումային հասարակության ներքին հուսալիության հիմնահարցը

ԱՊՀ երկրները հետխորհրդային շրջանում անցել են ներքաղաքական պայքարի մի շաբթ փուլեր։ Առաջին փուլում պայքարի գաղափարականացումն անխուսափելի էր, քանի որ նորանկախ երկրները կանգնած էին իրենց զարգացման պատմական հեռանկարի հայեցակարգը ճշգրտելու անհրաժեշտության առջև։ Գաղափարական ինքնորոշման այս փուլում մի որոշ ժամանակ պայքարի հիմնական թիրախը կոնունիստական գաղափարախոսությունն էր։ Ի դեպ, գերմանացի հայտնի տեսաբան, ֆրանկ-ֆուլտյան դպրոցի հայտնի ներկայացուցիչ Յոլ. Շաբերնասը հանգամանորեն վերլուծելով կառուցվածքային տրանսֆորմացիայի արդի գլոբալ պրոբլեմները, նկատում է, որ կոնունիստական իշխանության վերացումից հետո անհրաժեշտություն առաջացավ փոխել քաղաքական ուժերի /աջեր, ձախեր/ գաղափարական պայքարի ուղղվածությունը, քանի որ կոնունիստական գաղափարախոսության քննադատությունը այլևս որևէ հետաքրքրություն չի ներկայացնում։ Նկատենք, սակայն, որ բազմակուսակցական հանակարգի ծնավորումից հետո էլ տրանսֆորմացիոն հասարակություններում քաղաքական ուժերի տարրերակումը որոշ իմաստով պայմանական բնույթ է կրում։ Թե՛ ժողովրդավարական և թե՛ ազգանական կոչվող ուժերն իրենց գործելակերպով, Սահմանադրության նկատմանը իրենց վերաբերմունքով, ինչպես նաև «սոցիալիստական» ու «կապիտալիստական» հասարակական հանակարգերի իրենց պատկերացումներով գրեթե չեն տարրերվում։ Դամբնկնում են նաև հասարակության «պահպանողական մեծամասնությանը» կառավարելու սկզբունքները։

Դայաստանի քաղաքական դաշտի ծնավորման շուրջ տասնամյա փորձը վկայում է, որ այդպես էլ ծնավորվեցին «ազատ» ու «պետական» քաղաքացիների կենսափիլիստիկայություններն արտահայտող այնպիսի քաղաքական կազմակերպություններ, որոնք կարողանային նաև գործնականում հաստատել իրենց գաղափարական դրույթների իրագործելիությունը։ Դերթական ու արտահերթ ընտրությունների արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական հիմնական կուսակցությունները մրցունակ չեն։ Ոչ առճակատ բախումների տանելու նրանց կոչերը, ոչ նախկին վար-

չախմբի դեմ պայքարի մեջ վաստակ ունենալու հիշեցումները, լիբերալիզմի կամ ազգայնականության վտանգներով մարդկանց զգաստացնելու հորդորները ժողովրդի մեջ ցանկալի արձագանք չեն գտնում։ Անշուշտ, այդ դեպքում ընտրական «նոր տեխնոլոգիաները» վճռորոշ դեր են կատարում։ Բայց պակաս նշանակություն չունի նաև այն հանգամանքը, որ տրանսֆորմացիոն հասարակություններում, ուր դեռևս չեն ավարտվել հասարակության սոցիալական շերտավորման տնտեսական ու սոցիալ-հոգեբանական գործընթացները, քաղաքական կուսակցությունները չեն կարող ունենալ կայուն ու հուսալի սոցիալական հենարան։ Առավել ևս, որ գործեղ կուսակցությունների մեջ մասը, հավակնելով ազգի անունից խոսելու ու գործելու մենաշնորհին, այդպես էլ չեն ուզում հասկանալ, թե կոնկրետ որ սոցիալական խավը որ կուսակցությունից ինչ պահանջ ու ակնկալիք ունի։

Որոշ վերապահումով անշուշտ, բայց կարելի է ասել, որ տրանսֆորմացիոն հասարակություններում քաղաքական կյանքի գաղափարականացումը դարձել է մի կողմից՝ ներիշխանական ճգնաժամների և ազդեցության ոլորտների համար պայքարի միջոց, մեկ այլ դեպքում՝ իշխանության դեմ պայքարը կազմակերպելու եղանակ։ Իրականում, քաղաքական ուժերի գաղափարական տարածայնություններն արտահայտված են միայն նրանց ծրագրային փաստաթղթերում։ Նման եզրակացության համար հիմք կարող է հանդիսանալ այն անժմխտելի փաստը, որ Դայաստանի պարագայում անցած այս տարիներին իշխանության նաև ակնակից կամ քաղաքական հենարան են դարձել գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունները, բայց ներքին քաղաքական կուրսը սկզբունքորեն չի փոխվել։ Այս փաստից կարելի է անել երկու հիմնական եզրակացություն։ Կամ «սիմվոլիկայի» ոլորտում տարածայնությունները մարտավարական նշանակություն ունեցող հնարքներ են իշխող քաղաքական ուժերին քննադատելու և իշխանության հասնելու նկատառումներով, կամ էլ, ինչպես ցույց է տալիս քաղաքական կյանքի փորձը, իշխանության հասած ուժերը չեն կարող մնալ «սիմվոլիկայի» ոլորտում, և հարկադրված են ենթարկվել գործադիր իշխանության պրագմատիկ տրամաբանության պարտադրանքներին։ Այլապես դժվար է հասկանալ, թե գաղափարապես իրարամերժ քաղաքական ուժերն ինչպես են դաշնում միևնույն իշխանությանն աջակից ու մասնակից քաղաքական հենարան։

Ակնհայտ փաստ է, որ հասարակության գործառնության կայունությունը ապահովում են այն ինստիտուտները, որոնք սոցիալական տարբեր խմբերի միջև հաստատում են փոխհարաբերություններ, արտադրում ու տարածում են համակեցության արժեքային կողմնորոշումներ ու գաղափարներ: Նման ֆունկցիա կատարող ինստիտուտներից է նաև քաղաքական բազմակուսակցական համակարգը:

Դարձ է առաջանում, թե այդ գործառույթը որքանո՞վ է բնորոշ ՀՀ քաղաքակուսակցական քաղաքական համակարգին: Ինչու՝ Հայաստանում կուսակցական պլյուրալիզմը չի նպաստում համակեցության ռացիոնալացմանը:

Ոչ հեռու անցյալում իշխում էր մի համատարած մտայնություն, թե քավական է ազատվել կոմունիստական կուսակցության մենիշխանությունից, ստեղծել բազմակուսակցական համակարգ, և հասարակական կյանքը ինքնին կը ներառած ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան: Զեական ինաստով Հայաստանի քաղաքական համակարգը առանձնապես չի տարբերվում արևմտյան քաղաքական համակարգերից: Բայց որակական ինաստով ՀՀ քաղաքական ուժերն ու կազմակերպությունները ներազգային կյանքի կազմակերպման ու կարգավորման գործում դեռևս չեն կատարում նույն դերն ու նշանակությունը: Որոշ ինաստով նրանք ինքնանպատակ են և ազգային ու հասարակական շահերի մասին հիշում են ընտրությունից ընտրություն: Մեզանում հասարակության մեծամասնությունը դեռևս չի շփում կուսակցական կառույցների հետ և իր շահերի ու արժեքային կողմնորոշումների պաշտպանությունը այդ կառույցների մեջ չի տեսնում: Եթե անգամ նրանց միջև կապ կա, ապա միայն միջնորդավորված կուսակցական մամուլի և այլ լրատվամիջոցների միջոցով, որոնք նաև միշտ չեն, որ տալիս են իրավիճակի աղեկվատ արտացոլումը: Հասարակության մեջ գաղափարական խոր արմատներ չունենալու պատճառով հաճախ կուսակցությունները քաղաքական թատերաբեմից հեռանում են իրենց լիդերի ձախողման հետ մեկտեղ: Այսօր արդեն միանշանակորեն կարելի է ասել, որ անցումային հասարակություններից շատերում բազմակուսակցական համակարգը եապես չազդեց հասարակական կյանքի ժողովրդավարացման վրա: Բոլոր դեպքերում, նրանց գործունեությունը չարդարացրեց հասարակություն մեծամասնության սպասումները: Բանն այն է, որ ավանդական-փակ հասարակությունից ժո-

ղովրդավարական-բաց հասարակության անցման ներկա փուլում արմատապես փոխվել է քաղաքական ինստիտուտների, սոցիալական խմբերի ու անհատների փոխհարաբերությունների բնույթը ու բովանդակությունը: Եապես փոխվել են թե արտադրության կազմակերպման, թե բաշխման համակարգի և թե գաղափարական կողմնորոշումների համակարգերը: Երբեմնի կենսական կողմնորոշումների հնարավորություն և «անհրաժեշտություն» չունեցող հասարակությունը հայտնվել է այնպիսի պայմաններում, որ գործնականում հնարավոր չէ ընտրություն չկատարել: Հասարակական կյանքը դառնել է այլընտրանքային, ինչը մարդկանց մեծամասնության համար ոչ թե դրական, այլ «վթարային» նշանակություն ունի: Ինքնին հասկանալի է, որ այլընտրանքային այդ «քառոսում» առանձնահատուկ դեր կարող է կատարել քաղաքական բազմակուսակցական համակարգը: Բայց ամբողջ հարցն այն է, որ փոխակերպվող հասարակություններում քաղաքական կուսակցությունների գաղափարական որոշակիությունն ու ներքին դիմադրողականությունը դեռևս խիստ ցածր է: Ցանկության դեպքում ամեն մի առանձին կուսակցության ներսում կարելի է գտնել երկրի քաղաքական ու գաղափարական ողջ ներկապնակը: Ի լրումն այդ ամենի, ներկուսակցական տարածայնությունները. արդեն օրինաչափություն դարձած պառակտումներն ու «քույր» կուսակցությունների ծնավորումը մարդկանց հնարավորություն չի տալիս ճիշտ կողմնորոշվել այլընտրանքային գաղափարական այս քառոսում: Եվ ինչպես կողմնորոշվի, երբ կուսակցություններից շատերը խոսում են իրենց առանձնահատուկ գաղափարական որոշակիության մասին, բայց քաղաքական ամեն մի հերթական շրջադարձի ժամանակ դրսերում գաղափարական պյուրալիզմ, ըստ անհիրաժեշտության, արմատական կամ ազատական ներկայանալու հավակնություն:

Անցումային հասարակության քաղաքական կազմակերպությունների ներքին դիմադրողականության ու գաղափարական որոշակիության անբավարար վիճակի պատճառներից մեկը ներկուսակցական փոխհարաբերությունների անձնավորված բնույթն է: Ըստ Էռթյան, կուսակցությունները կառուցված են «անձնական կախվածության» հարաբերությունների ավատատիրական սկզբունքներով: Այդ տեսակետից կարելի է ենթադրել, որ քիչ թե շատ կոլեկտիվ պատասխանատվության կառավարման համակարգի ստեղծման ցանկացած փորձ դատապարտված է, եթե այդ սկզ-

բունքին ձգտող իշխանությունը պետք է գործ ունենա «անձնական կախվածության» սկզբունքով գործող կուսակցությունների հետ: Բանն այն է, որ «անձնական կախվածությունը» կլանային համակարգերին բնորոշ հարաբերությունների ձև է: Այդ իսկ պատճառով էլ տրամաբանական հարց է առաջանում. կլանների դեմ պայքարի հավակնություններ ունեցող իշխանությունը, եթե այդ հավակնությունները նաև ամփեղժ են, ինչպես կարող է կառավարման համակարգը համալրել կլանային սկզբունքներով գործառնող կուսակցությունների կողմից գործուղված «արիեստավարժ» կադրերով:

Տրանսֆորմացիոն հասարակություններում եթե իշխանությունների կադրային քաղաքականությունն այս կամ այն չափով գտնվում է հասարակական հսկողության դաշտում, ապա կուսակցական առաջադրումներն ընդհանրապես դուրս են հասարակական քննարկումներից: Դաշվի առնելով ներկուսակցական փոխհարաբերությունների բնույթը՝ տրամաբանական հարց է առաջանում. կուսակցությունների «արիեստավարժ» կադրերը որքանո՞վ են նարկայացնում հասարակության բարոյական և ինտելեկտուալ պոտենցիալը, որքանո՞վ են նրանք դեկավարվում «համոզմունքների եթիկայով» կամ «պատասխանատվության եթիկայով»: Այդ տեսակետից, որքան ռեֆորմացիայի կարիք ունի անցումային հասարակության պետական համակարգը, նույնքան և ավելի ռեֆորմացիայի խնդիրներ ունեն քաղաքական կուսակցությունները: Այն պահանջները, որ ընդդիմադիր ու իշխանամետ ուժերը դնում են պետական համակարգի առջև, նույն հաջողությամբ և նույն տրամաբանությամբ իշխանությունները կարող են և արդեն պարտավոր են պահանջել քաղաքական ուժերից:

Տրանսֆորմացիոն հասարակություններում ձևավորվում է մի ընդհանուր գիտակցություն, թե երկրի ու հասարակության առջև քաղաքական միակ պատասխանատուն իշխանությունն է: Կասկած չկա, որ իշխանության հիմնական գործառույթը երկրի ներքին ու արտաքին անվտանգության ապահովումն է: Բայց հենց այն պատճառով, որ իշխանությունը, ի վերջո, ձևավորվում է քաղաքական ուժերից, նշանակում է, որ ցանկացած կուսակցություն ունի պատասխանատվության իր բաժինը: Քաղաքական կազմակերպությունների գործունեությունն ամբողջապես առնչվում է ազգային ու պետական անվտանգության հարցերին և արդեն այդքանով այն պետք է ոչ միայն բաց լինի, այլև վերահսկելի: Քաղաքական կազմակեր-

պությունների գործունեության ռեֆորմացիան անհրաժեշտ է նաև ներքաղաքական զարգացումների տեսանկյունից: Վերջին հաշվով այդ կազմակերպությունները հասարակության և իշխանության կապի ու փոխհարաբերության միջանկյալ օղակներ են և, այսպես կոչված, հասարակության սոցիալ-տնտեսական ու քաղաքական պահանջները իշխանությանը ներկայացնող միջնորդները: Անբնական է, եթե համընդհանուր քննադատության թիրախն դարձած իշխանության գործունեության դեմ պայքարող, իշխանության դեֆորմացիայի պատճառներն ու հետևանքները նատնանշող քաղաքական կազմակերպությունները ևս ունեն նվազագույն հուսալիության վարկանիշ: Եթե ժողովուրդը հավասարապես չի ընդունում ու չի հավատում և իշխանություններին, և կուսակցություններին, նշանակում է մերժում է ազգի քաղաքական կազմակերպության ցանկացած ձև: Դայատանի քաղաքական կյանքում, օրինակ, իշխում է այն մտայնությունը, թե, ի տարբերություն պետական համակարգի, քաղաքական կուսակցությունների գործունեությունը մասնավոր ոլորտ է և ենթակա չէ ոչ պետական, ոչ էլ, առավել ևս, հասարակական վերահսկողության: Բայց չնոռանքնը, որ կուսակցությունների գործունեությունն անմիջապես առնչվում է ազգային անվտանգությանը, հասարակական համակարգի օպտիմալ գործառնությանը, և այդքանով էլ այդ գործունեությունը պետք է լինի բաց ու վերահսկելի:

Քաղաքական համակարգում իշխանությունը նույն դերն է կատարում, ինչ փողը՝ տնտեսական համակարգում: Երկուսն էլ օժտված են պետական շինարարության հզոր կարողություններով և քաղաքացիական հասարակության մեջ առաջին հերթին ծառայում են պետականության ազգային կառույցին: Երկուսի արժեգրկումն էլ, սակայն, կործանարար հետևանքներ կարող է ունենալ երկրի սոցիալ-տնտեսական, հոգևոր ու քաղաքական կյանքի վրա: Տրանսֆորմացիոն հասարակություններում միջին զգացողությունների և միջին հնարավորությունների տեր քաղաքացին ամենից շատ հոգնում է և հուսալքվում ներքին անորոշությունից ու ազգային գերխնդիրների անհարկի շահարկումներից: Այս տեսակետից, օրինակ, ներկա փուլում հայ ժողովորդի համար տրամաֆորմացիոն խնդիրների լուծումը լրացնեցի ծանրաբեռնվածություն ու բարդություն ունի, քանի որ դրան հավելված են տրամաֆորմացիայի մեկնարկային փուլից մնացած ու տակավին չլուծված ներքին ու արտաքին քաղաքական

խնդիրները:

Հենց այն պատճառով, որ Հայաստանը գտնվում է «ռազմաքաղաքական երկրաշրժերի» գոտում, քաղաքական համակարգի ներքին հուսալիության, արտաքին ու ներքին վտանգները զգալու և կանխելու համակարգային ընկալունակության պրոբլեմները ծեռք են բերում առանձնահատուկ քաղաքական հնչեղություն: Միայն ներքին անվտանգության հուսալի նախադրյալներ ունեցող սոցիալական համակարգը կարող է օպտիմալ լուծել արտաքին անվտանգության հիմնախնդիրները: Ժամանակակից մրցակցային աշխարհում պետական ու ազգային խնդիրները լուծելու և մրցունակ լինելու համար անհրաժեշտ է ազգի քաղաքական կազմակերպման այնպիսի ձև, որն աչքի կը ընկնի ներքին կարգապահությամբ, օրինականությամբ, ազգային ու գործառությային փոխադարձ կախվածությամբ և լեգիտիմությամբ:

Տրամսֆորմացիոն հասարակությունների պատմական փորձը հաստատում է, որ անցունային փուլի դժվարությունների հաղթահարման և բաց-ժողովրդավարական հասարակությունների ստեղծման ճանապարհին, որպես միջանկյալ լուծում, անհրաժեշտ է կիրառել մորիլիզացիոն քաղաքականություն: Մորիլիզացիոն քաղաքականության անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ հասարակությունը հայտնվել է ճգնաժամային իրավիճակում և նրա արմատական պահանջմունքների բավարարմանը ռեալ վտանգ է սպառնում: Նման իրավիճակներում բարձրանում է սոցիալական ու քաղաքական լարվածությունը, և անհրաժեշտություն է առաջանում մորիլիզացմել համակարգի արտաքին ու ներքին հնարավորությունները:

Պետական ու քաղաքական համակարգի զարգացման ու գործառնության մորիլիզացիոն նորմելը ներքին հնարավորությունների և նյութական ու հոգևոր ռեսուրսների կազմակերպման ու օգտագործման այնպիսի քաղաքականություն է, երբ քիչ ծախսերով, բայց նպատակալաց գործունեության միջոցով կարելի է հասնել ազգային ու պետական կյանքի ներքին դիմադրողականության իմունիտետի բարձրացմանը: Առավել ևս, որ անցունային հասարակություններին բնորոշ տնտեսական ճգնաժամների նկատմամբ ազգարնակչության իմունիտետը խիստ ցածր է, քանի որ նրանք դեռևս ծանոթ չեն շուկայական հարաբերությունների օրինաչփություններին և անպաշտապան են: Չունենալով նյութական մեծ պաշար-

ներ ու մրցունակ արդյունաբերություն ստեղծելու հնարավորություններ ու ժամանակ, առաջին հերթին անհրաժեշտ է համակարգի ներսում հաստատել գործառության որոշակիություն, կազմակերպված ազգային կյանք, եղած հնարավորություններին համապատասխան և բոլորի համար հավասար սոցիալական գուսապ ապրելակերպ և գործողությունների նպատակալաց հետևողականություն:

Դայ ժողովրդի գոյատևման ներքին պայմաններն արդեն իսկ հատել են վտանգավոր սահմանագիծը: Յետագա անկունը կանխելու առաջնահերթ քայլերը Ենթադրում են կառավարման կենտրոնացում, բաշխման արդարացի համակարգի ստեղծում, կոչտ վերահսկողություն և քաղաքական դաշտի հստակեցում: Մրանք, անշուշտ, շուկայական հարաբերությունների օրինաչփություններ չեն: Բայց ազգային ու հատկապես պետական համակարգը ճգնաժամից դուրս բերելու միակ ելքը մորիլիզացիոն քաղաքականության կիրառումն է: Պարզ է նաև, որ սոցիալ-տնտեսական կյանքի մորիլիզացիայի ծրագրը չի կարող լինել երկարատև քաղաքական կուրս: Այն որոշակի փուլի քաղաքականություն է և պետք է առաջադրի այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը, ի վերջո, կիանգեցնի պետական միջամտության հետագա նվազեցման:

Ինքնին հասկանալի է, որ համակարգի ներքին դիմադրողականության բարձրացման հայցում պետական վերահսկողության ուժեղացումը ենթադրում է շուկայական հարաբերությունների սահմանափակման որոշ տարրեր: Նման քաղաքականությունը վտանգավոր չէ, եթե խնդիր լուծող քաղաքական ուժերը սկզբունքորոն լիբերալ գաղափարախոսության կողմնակիցներ են և դեկավարվում են ազգային շահերով: Նախորդ վարչախումբը, օրինակ, թեև քննադատվում էր չափից ավելի լիբերալիզմի մեջ, բայց հենց այն տարիներին այդպես էլ նորմալ պայմաններ չստեղծեց ժողովրդավարության ու շուկայական հարաբերությունների ինստիտուտների ձևավորման ու կայացման համար: Ավելին, ժողովրդավարության անվան տակ խարարվեցին ներազգային սոցիալ-տնտեսական ու բարոյական դիմադրաների բնականոն զարգացումները: Պետական համակարգի ներսում քաղաքական ճգնաժամների, հերթական ու արտահերթ ընտրությունների և ընդհանրապես բարեփոխումների առիթն ու պատճառը, ի վերջո, հանգում էր «իշխանության հարցին»: Որոշակի պայմաններում և որոշակի գերխնդիր ունեցող պետական համակարգը կարող

է օպտիմալ գործառնել միայն այն դեպքում, եթե աշխատում է նվազագույն ծախսերով հասնել առավել արդյունքի: Բայց նկատենք, որ նման ռեժիմը կառավարման համակարգի արդյունավետության քանակական ու տեխնիկական ցուցանիշ է: Տնտեսական ցանկացած մասնավոր ձեռնարկ կառուցված է այդ սկզբունքով: Պետական համակարգի տեսանկյունից քանակական այդ ցուցանիշը դեռևս երկրի քաղաքական ու տնտեսական անվտանգության ցուցանիշ չէ:

Մորիլիզացիոն քաղաքականությունը կարող է դառնալ համակարգի ներքին անվտանգության ցուցանիշ, եթե ունի հասարակականորեն օգտակար գործողության գործակից: Դակառակ դեպքում, ինչպես վկայում է մորիլիզացիոն քաղաքականության խորհրդային փորձը, այն կարող է հանգեցնել դիկտատուրայի: Այլ կերպ ասած, վտանգը ոչ թե մորիլիզացիոն քաղաքականության մեջ է, այլ այդ քաղաքականության շարժառիթների: Դետիչորիդային շատ նորանկախ հանրապետություններում քաղաքացիական հասարակություն ծևավորելու խնդիրը, ինչպես նաև հասարակության մոդեռնիզացիան առաջնահերթ նշանակություն չունեցավ: Փոխարենը՝ նկատվում է պետական բյուրոկրատական ապարատի, իշխող քաղաքական ընտրանու մոդեռնիզացման և ամեն տեսակի դժգոհություններին հակազդելու միտում:

Դամակարգի օպտիմալ զարգացման ու գործառութային ամրողականության ամրապնդման ցանկացած ծրագիր որևէ նշանակություն ունի, եթե իրագործվում է: Իսկ դա նշանակում է, որ հարցը ծրագիր իրագործող պետական օպտիմալ համակարգ ունենալ-չունենալու մեջ է: Դարցին այս տեսանկյունից նայելիս դժվար չէ ենթադրել, որ տրանսֆորմացիոն ծանրագույն խնդիրներով ծանրաբեռնված անցումային ամեն մի հասարակություն կանգնած է կառավարման համակարգի օպտիմալացման և համակարգի ներքին դիմադրողականության բարձրացման անհրաժեշտության առջև:

Քաղաքական, գաղափարական, մշակութային ու արժեքային հնարավոր ագրեսիաների վտանգը նվազագույնի հասցնելու կարևոր պայմաններից մեկը ազգային ու պետական կյանքի որոշակիությունը պահպանելու համակարգի ներքին դիմադրողականություն է: Տրանսֆորմացիոն հասարակություններում այդ որոշակիությունը հաճախ թվայցալ է: Այդ պատճառով էլ որոշ ժամանակ այդ համակարգերում ընթացող գործըն-

թացները շրջելի են: Ազգի ներքին անվտանգության հիմնական չափանիշը նրա քաղաքական ու պետական կառույցի պաշտպանվածությունն է, նրա քաղաքական կուրսի անշրջելիությունը, անկախ նրանից, թե ինչ ուժեր են դեկավարում այդ համակարգը: Բայց, ինչպես հաստատում են այս տարիներին դրսնորված քաղաքական ճգնաժամերը, առնվազն հոգեբանորեն ազգի մեծամասնությունը և նույնիսկ քաղաքական որոշ ուժեր տիրոջ և նախաձեռնողի զգացողություն չունեն, և իշխանության ու նույնիսկ պետական համակարգի հետ իրենց «կապվածությունը» դիտում են հաճամանքներով պարտադրված փաստ:

Այդ երևույթի պատճառներից մեկն այն է, որ բարեփոխումների սոցիոմշակութային արժեքները հոգեբանական նակարդակում դեռևս յուրացված ու ներանձնավորված չեն: Դասարակության մեջ ոչ թե արժեքների սոսկական վերահմաստավիրում է ընթանում, այլ գիտակցության երկփեղկում: Շատերն իրենց «կորցրել» են քաղաքական քազմակարծիքայնության դաշտում: Քաղաքական ո՞ր կուսակցությանը ապավիճել, ո՞ր արժեքային ու գաղափարական չափորոշիչները դարձնել կյանքի կողմնորոշչի: Բացի այդ, թեև ծագել են նոր քաղաքական կողմնորոշիչներ ու համապատասխան կենսաշխարհներ, բայց պահպանվել են այդ արժեքների հանդեպ նախորդ համակարգի անհանդուժողական մտածողություններին հակազդելու միտում:

Դամակարգի օպտիմալ զարգացման ամրողականության ամրապնդման ամրապնդման ցանկացած ծրագիր որևէ նշանակություն ունի, եթե իրագործվում է: Իսկ դա նշանակում է, որ հարցը ծրագիր իրագործող պետական օպտիմալ համակարգ ունենալ-չունենալու մեջ է: Դարցին այս տեսանկյունից նայելիս դժվար չէ ենթադրել, որ տրանսֆորմացիոն ծանրագույն խնդիրներով ծանրաբեռնված անցումային ամեն մի հասարակություն կանգնած է կառավարման համակարգի օպտիմալացման և համակարգի ներքին դիմադրողականության բարձրացման անհրաժեշտության առջև:

Քաղաքական, գաղափարական, մշակութային ու արժեքային հնարավոր ագրեսիաների վտանգը նվազագույնի հասցնելու կարևոր պայմաններից մեկը ազգային ու պետական կյանքի որոշակիությունը պահպանելու համակարգի ներքին դիմադրողականություն է: Տրանսֆորմացիոն հասարակություններում այդ որոշակիությունը հաճախ թվայցալ է: Այդ պատճառով էլ որոշ ժամանակ այդ համակարգերում ընթացող գործընթացներին անփոփոխ պահպանություն կարող է հաստատված լավագույն համակարգերում նշանակական չափանիշը պահպանությանը համապատասխան կազմակերպությունների համակարգերը հասարակական կյանքի կազմակերպման ու բարեփոխումների իրագործման գործընթացներում ավելի շատ ուշադրություն են դարձնում իրադրային ու իրատապ լուծումներ պահանջող խնդիրների վրա և դեկավարվում մի չիմնավորված լավագույն համապատասխան բաղադրամը՝ թե սոցիալ-քաղաքական շուկան ի

Վերջոն կկարգավորվի ժողովրդավարության հիմնարար սկզբունքների կենսագործունեությունը: Սոցիալ-քաղաքական շուկան իհարկե կկարգավորի և կարգավորում է ժողովրդավարական ու քաղաքացիական հարաբերությունների կենսագործունեությունը: Վատահարար կարելի է ասել նաև, որ ժողովրդավարության սոցիոնշակութային շատ արժեքներ արդեն իսկ դարձել են կյանքի նորմ ու ապրելակերպ: Բայց չմոռանանք, որ շուկան տարերային կարգավորիչ է և հատկապես անցունային փուլերում չի կարող կանխել օրինազանց, իշխանության տարրեր թևերի տարանջատման սկզբունքի խախտման և սահմանադրական կարգի շրջանցման սույնացքերը: Դանգամանք, որ խիստ մեծացնում է համակարգային տրանսֆորմացիաների «սոցիալական գինը»:

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառացած կենսական հիմնահարցեր:

Դայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդիհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մոտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Դամահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Դայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի նշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Դամաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակրիսում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսնորվում քաղաքակրթությունների շիման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գենոֆոնդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Դիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային համրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերուների համադրման և երկխոսության վայր:

Դամալսարամի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

ԴԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՄԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Դիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավիրականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,

- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ծառում,
- կոնկրետ արդյունքների գործադրում առաջարկությունների ներկայացում:

գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝

- ռազմավարության և առաջնահերթությունների ծցում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

• յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեջ խանհզմների ճշգրտում,

• պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացնան մեխանիզմների ճշգրտում,

• պետական կառավարման օպտիմալ հանակարգերի մոդելավորում:

Դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում

• հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,

• դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,

• կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,

• տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,

• տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,

• քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,

• համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,

• հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,

• գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

ՀԻՄԱԿՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄԱԿԱԿԱՆ ՈՒՂՈՌԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով միշարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխսկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝

• արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառությունները,

• ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. Էռլեյուն, բովանդակություն,

• հայկական շարունակականության հայեցակարգը,

• ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,

• ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,

• ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

• Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրանասեր,

• Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,

• Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառությները,

• ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,

• ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,

• գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրանաս,

• անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները

21-րդ դարում:

«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.

• ազգային անվտանգության հանալիր ծրագրի հիմնադրույթները,

• հազեր-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,

• մշակութային անվտանգության հիմնադրույթներ,

• կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,

• գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,

• տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,

• կոնյունկիւրացիոն անվտանգության հիմնադրույթներ,

• տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,

• բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,

• ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,

• առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,

• սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Անդրամիկ Մարգարյան - ՀՀ Վարչապետ

Մանուկ Թոփուլյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

Կարինե Կիրակոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ

Լևոն Մկրտչյան - ՀՀ Կրթության և գիտության նախարար

Տիգրան Մարգարյան - ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Արա Ավետիսյան - ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com